ՀԱՍՈՒՅԹԸ՝
ԶՈՀՎԱԾ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ
ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ



ԾԱՆՐ ՎԱՐԱԳՈՒՅՐ

Պատմում է ՀԱԲ-ի կոմիսար
ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ



ՀԱՍՈՒՅԹԸ՝
ԶՈՀՎԱԾ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ

ԾԱՆՐ ՎԱՐԱԳՈՒՅՐ

(պատմում է ՀԱԲ-ի կոմիսար
ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ)

«Գրական թերթ» Երևան 1992

Ծնվել է 1929 թ. Կոտայքի շրջանի Շահաբ (Մայակովսկի) գյուղում։ Ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը։ 1958—72 թթ. աշխատել է Երևանի մշակույթի օջախներում և «Ավանգարդ» թերթի խմբագրությունում որպես արվեստի, գրականության ու գիտության բաժնի վարիչ։ Հեղինակել է բազմաթիվ հոդվածներ կերպարվեստի, կինոյի, թատրոնի, գրականության և գիտության թեմաներով, կատարել թարգմանություններ։ 1969 թ. հրատարակել է Կոմիտասին նվիրված «Հավերժ ճամփորդ» գրքույկը, որը թարգմանվել է ռուսերեն և ուկրաիներեն։ 1973—83 թթ. աշխատել է «Հայաստան» հրատարակչությունում որպես արվեստի խմբագրության բաժնի վարիչ։ Գրել է հայկական գորգարվեստին նվիրված աշխատություն, որը պատրաստ է տպագրության և սպասում է իր հովանավորին։

1988—90 թթ. հասարակական-քաղաքական բուռն իրադարձությունների ժամանակ անդամ և ղեկավարներից է եղել մի շարք ազգային կազմակերպությունների (ԱԻՄ, «Զորավիգ», ՀԱԲ, «Միացյալ ճակատ», «Նախախորհրդարան»)։ Մինչև ՀԱԲ-ի լուծարումը (1990 թ. օգոստոս) եղել է նրա կոմիսարը։ Վերջին գործունեության համար դատապարտվել և պատիժը կրել է Սովետաշենի բերդում ու Կոշի գաղութում։

© «Գրական թերթ» 1992

Սարդու մեջ եղած գեները, նրա դաստիարակությունը, կրթությունը, պարարտ հող գտնելով, ի վերջո, պիտի դրսևորվեն: Պատանեկության տարիներին, երազել եմ զինվորական դառնալ, բայց միշտ էլ մտածել եմ, որ չեմ կարող, քանի որ հակումներս ավելի շատ պոեզիայի, գրականության, կերպարվեստի, երգ-երաժշտության կողմն էին: Դաստիարակվել եմ մեր գրականության հայրենասիրական թևով, Բաֆֆին, որի հայրենակիցն եմ,— իմ նախնիների ծննդավայրը Փայաջուկից ընդամենը չորս կիլոմետր հեռավորության վրա էր,— իմ պաշտամունքն էր, ես նրան կարդացել եմ դեռ 7—8-րդ դասարաններում, երբ արգելված էր. հարևանս, որի տղայի հետ թվաբանություն էի պարապում, լավ գրադարան ուներ և թույլ էր տալիս ինձ նրանից օգտվելու: Ես նույնիսկ երդում ունեի՝ ամեն առավոտ քնից արթնանալիս, և երեկո՝ անկողին մտնելիս, հիշել Բաֆֆուն: Այդպես էլ գրել էի իմ օրագրում: Դա շարունակվեց մինչև համալսարան ընդունվելս, երբ արդեն հասուն մարդ էի, արդեն ուրիշ կերպարներ, ուրիշ հեղինակություններ եկան, խառնվեցին... Լեզվի ու գրականության մասնագետ դարձա, իմ հայրենասիրությունը ավելի խորն ու իմաստավորված էր դառնում, և դա պայմանավորված էր մեր պատմության ու մշակույթի ուսումնասիրությամբ. գնալով ավելի խորն էի համոզվում, որ այդպիսի պատմություն և արվեստ ունեցող ժողովուրդը չի կարող վերանալ աշխարհի երեսից: Բնավորությամբ հեզ չեմ, հաշտ չէի մանավանդ ղեկավարների հետ, մանավանդ գաղափարական հարցերում:

1988 թ. փետրվարի 20-ին գործով մտել էի հրատարակչություն, այնտեղ ինձ ասացին, որ օպերայի հրապարակում հավաք է լինելու, իսկ թե ինչ առիթով՝ ոչ ոք չկարողացավ

ստույգ ասել: Ես գնացի այնտեղ. հազիվ մի 40—50 մարդ լիներ, որոնք նույնպես չգիտեին առիթը: Ժողովուրդը գնալով շատացավ և երբ արդեն մոտ 7—8 հարյուր մարդ էր հավաքվել, եկավ Վաչե Սարուխանյանը, որին դեմքով գիտեի, տեսել էի Ղարաբաղում, ուր մինչ 88 թվականը մի քանի անգամ եղել էի գորգարվեստը ուսումնասիրելու առիթով: Եվ ահա Սարուխանյանն ասաց, որ այս պահին Արցախում տեղի է ունենում մարզխորհրդի նիստ, որտեղ պիտի որոշում ընդունվի Լեռնային Ղարաբաղը Հայաստանին միացնելու վերաբերյալ, որոշումն էլ պիտի հասցվի Հայաստան: Դե, պատկերացրեք իմ ոգևորությունը: Վերակառուցումն ընթացքի մեջ էր, ես կոմունիստ էի և մեծ հավատով էի լցված նրա նկատմամբ. պիտի խոստովանեմ, որ անվերապահ ընդունում էի մարքսիզմը, թեև կուսակցության շարքերն եմ ընդունվել 42 տարեկան հասակում: Ավելի շուտ չէի դիմել, որովհետև անձամբ բազմաթիվ կուսակցականների գիտեի, որոնք իսկական հանցագործներ էին, անբարոյական, կաշառակեր և բարձր պաշտոններ էին զբաղեցնում: Լրագրող լինելու բերումով շատ տեղերում էի լինում, շատ մարդկանց հետ առընչվում-շփվում և զանազան արատներ տեսնելով հանդերձ՝ շարունակում էի հավատալ մարքսիզմին. ինչպես չհավատայի, երբ մանուկ հասակից մեզ ներարկել էին Լենինին պապիկի գործին ծառայելու, նոր աշխարհ կառուցելու ոգին: Հետո միայն հասկացա, որ այդ ամենը մտածված, հետևողականորեն կիրառվող քաղաքական կեղծիք է:

Ուրեմն, երբ Վաչեն ասաց այդ որոշման մասին, մտածեցի, որ դա շատ հիշտ մտածված քայլ է. չէ որ Գորբաչովն իր ելույթներում արդեն մի քանի անգամ ասել էր, որ մեզանում ազգային հարցը հիշտ չի լուծված և պիտի շտկվի ուրիշ բազմաթիվ այլ հարցերի հետ մեկտեղ: Ի դեպ, այդ ժամանակ աշխատում էի պետական պատկերասրահում և, որպես կուսակցական, ղեկավարում էի քաղխմբակներ, մարդկանց բացատրում էի վերակառուցման գաղափարները և համոզում, որ դա է փրկելու երկիրը: Եվ ահա այդ պահից ես զինվորագրվեցի ազգային-ազատագրական պայքարին և այլևս ոչ մի բացակայություն չեմ ունեցել, շատ աշխատանք կատարելով նաև կուլիսներում. այսօրվա ղեկավարությունը, որ իշխանու-

թյան է հասել, դրանում կա նաև իմ ծառայությունը՝ այն առումով, որ այդ ժամանակից ի վեր իմ նպատակը կոմունիստական վարչակարգի տապալումն էր: Սումգայիթից հետո ես այլևս ոչ մարքսիզմին էի հավատում, ոչ Լենինին կամ մեկ ուրիշին. ես ասես վերածնվեցի գաղափարապես որպես նոր մարդ: Այդ օրերի իմ արտահայտությունը, որ լավ ծանոթ է իմ շրջապատի մարդկանց, այս էր՝ մենք բոլորս սկսում ենք մեր նոր կենսագրությունը, դու կաշառակեր ես եղել, հանցագործություններ ես կատարել թե ինչով ես զբաղվել՝ ոչ մի նշանակություն չունի, այսօրվանից կամ նորից ծնվում ես որպես սրիկա, կամ որպես մաքուր հայորդի: Սա իմ խորին համոզմունքն էր:

Սումգայիթից հետո ես, թերևս, առաջիններից մեկն էի, որ զենք վերցնելու կոչ արեցի. դրանից բավական ուշ Իգոր Մուրադյանն էր, որ նույն կոչով հանդես եկավ: Ասեմ, որ կապիտանի կոչում ունեմ, համալսարանն ավարտելուց հետո շատ անգամներ վերապատրաստման եմ մեկնել, այսօրվա այդ սարսափելի «Գրադից» ֆենոմենն եմ հանձնել: Ինչպես. ծանոթ լինելով ժողովրդի տնտեսական վիճակին, գիտական պոտենցիալին, կոչ արեցի այլևս ոչ մի գործադուլ չանել, ընդհակառակը, մի հերթափոխ էլ ավելի աշխատել ու արտադրել զենք ու զինամթերք: Հայաստանը ունի գիտական փայլուն միտք, գիտատեխնիկական նույնքան փայլուն մտավորականություն, առաջնակարգ կոնստրուկտորներ ու վարպետներ: Հայտնի է, որ 1941—45 թթ. Երևանի 447-րդ (այժմ Հայէլեկտրո) գործարանը զենք էր արտադրում, անգամ ինքնաթիռներ էին հավաքում այդտեղ, այնպես որ՝ զինագործ վարպետների մի մասը կար, կային նրանց աշակերտները: Լրագրական աշխատանքի բերումով ես լայն շփում ունեի արտադրության, գիտատեխնիկական մտավորականության հետ, ժամանակին ինձ նույնիսկ համարում էին Մերգելյանի անվան ինստիտուտի հատուկ թղթակիցը. այնտեղ մի երևույթ չկար, որ չլուսաբանեի: Ահա այս ամենը լավ իմանալով էր, որ կոչ էի անում զենք ու զինամթերք արտադրել, կազմակերպել բանվորական, գյուղացիական ջոկատներ, հասկանում էի, որ մենք մտնում ենք երկարատև, թերևս անվախնան պատե-

ռազմի մեջ: Եկել էր ազգային-ազատագրական պայքարի ժամը, այն, ինչին վաղուց էինք սպասում:

Պիտի ասեմ, որ 1965-ին, երբ նշվում էր Մեծ եղեռնի 50-ամյակը, ես «Ավանգարդ» թերթի աշխատակիցն էի և ներկա եմ եղել մեր ժողովրդի զարթոնքի այդ առաջին պոռթկմանը: Ամեն ինչի ականատեսն եմ եղել, հիշում եմ Պարույր Սևակի, Սիլվա Կապուտիկյանի ելույթները, այն 7 հոգու ելույթները, որոնք հետագայում ձերբակալվեցին: Այն ժամանակ, տեսնելով իմ ակտիվությունը, մարդիկ մոտենում էին ինձ ու առաջարկում մտնել իրենց քաղաքական կուսակցության մեջ: Հիմա չգիտեմ՝ խոհեմությա՞նը վերագրեմ, թե վախին, բայց նրանց ասացի, որ առանց ժողովրդական բուն զանգվածների աջակցության խորհրդային հասարակարգում հրնարավոր չէ քաղաքական մեկ այլ կուսակցության գոյությունը: Ես հիմա էլ այդ համոզմունքին եմ: Ի դեպ, այսպիսի մի միտք էլ եմ զարգացրել դեռ այն ժամանակ՝ խորհրդային բանտերում քաղաքական գործիչներ չեն կարող ծնվել, դա անհնարին է, քաղաքական գործիչ դառնալու համար նախ պիտի իսկապես քաղաքական պայքարի բարենպաստ պայմաններ լինեն ազատության մեջ, իսկ բանտերը մարդկանց հոգին խեղդում են: Իմ այս գնահատականը վերաբերում է նաև այսօրվա որոշ պոլիտիկների, որոնք պարծենում են իրենց բանտարկությամբ: Քաղաքական բանտարկյալը սովետական բանտից դուրս է գալիս կա՛մ որպես կենդանի դիակ, կա՛մ հոգով խեղանդամ, կա՛մ որպես ծախու գործակալ: Սա հայտնի իրողություն է: Մեր այս շարժման օրերին 1965-ի ակտիվիստներից շատերն արդեն ՊԱԿ-ի գործակալներ էին: Հիմա նրանց անունները չեմ հրապարակի, դրա կարիքը չկա, ինչպես ասում են՝ օրը կգա... Սա՝ իմիջիայլոց:

Ինձ պայքարի է կոչել բացառապես իմ գաղափարական կողմնորոշումը, գնացել եմ հոգուս թելադրանքով: Ինչո՞ւ հատկապես դեպի զինված պայքարը: Որովհետև խոր համոզմունք ունեի, որ այս երկրում ոչ թե սոցիալիզմ է, այլ պետական կապիտալիզմ, դասակարգերը վերանալու են, իշխում է պետական մոնոպոլիան: Վերջերս, երբ ուսումնասիրում էի ֆաշիզմի պատմությունը, Հիտլերի կյանքն ու գործը, ավելի քան համոզվեցի, որ գերմանական ֆաշիզմն օգտվել է

խորհրդային ֆաշիզմի հարուստ փորձից. դրանց տարբերությունն այն է, որ մեզանում ֆաշիզմը եղել է կոմունիզմի շղարշով զարդարված և այդ պատճառով էլ տևեց ավելի քան 70 տարի, իսկ գերմանական ֆաշիզմը մերկ էր և այն աստիճան ինքնաբացահայտվեց, որ աշխարհի ժողովուրդներին ոտքի հանեց իր դեմ և տևեց ընդամենը 12 տարի: Ահա ինչու խորհրդային ֆաշիզմը շատ ավելի խոր ավերածություններ կատարեց մարդկանց, ժողովուրդների հոգեբանության մեջ, քան գերմանականը:

Ուրեմն, սումգայիթյան դեպքերից հետո ես դարձա ինքնապաշտպանության համար զինվելու գաղափարի քարոզիչը: «Ղարաբաղ» կոմիտե—2-ը (այսպես եմ ասում, որովհետև առաջին կոմիտեն ստեղծել էին Իգոր Մուրադյանը, Վաչե Սարուխանյանը և էլի ուրիշ մի քանիսը) շատ չանցած ինձ համարեց պրովոկատոր: Կոմիտեի անդամները ինձ թույլ չէին տալիս միկրոֆոնին մոտենալ, ես չէի կարող ժողովրդին հայտնել իմ մտքերը, ստիպված էի հանրահավաքն սկսվելուց առաջ իմ հանրահավաքն անել կա՛մ Սպենդիարյանի, կա՛մ Թումանյանի արձանի պատվանդանի մոտ. բորբոքում էի մարդկանց միտքը, նրանք ինձ լսում ու զարմանում էին, թե ինչու կոմիտեի տղաները ինձ թույլ չեն տալիս հրապարակավ ելույթ ունենալ:

Այսպես ուրեմն, գաղափարը կար դեռևս Նալբանդյանի օրվանից՝ սուր է հարկավոր կտրիճի ձեռքին (ես Նալբանդյանին համարում եմ մեր ֆիդայական շարժման նախակարապետը), մնում էր համախոհներ գտնել, մարդկանց մոբիլիզացնել ու անցնել գործի: Իմ ելույթները լսելով՝ ինձ մոտենում էին կոնստրուկտորներ, վարպետներ ու խոստանում էին զենքեր նորոգել, ես նրանց ցուցակագրում էի, հետևերը կապ էի պահպանում: Եղան գիտնականներ, որոնք երբոր, շորրորդ մարդու միջոցով ինձ իմաց տվին, որ կարող են ժամանակակից անեղ զենք ստեղծել: Ես կազմակերպություն էի փնտրում, ինքս այդպիսին ստեղծել չէի կարող, դրա համար միջոցներ էին պետք: Կար պատերազմի և աշխատանքի վետերանների մի կազմակերպություն, որ գլխավորում էր Սամվել Պողոսյանը: Տարիքս թույլ էր տալիս հարելու այդ կազմակերպությանը, և այդտեղ այնքան ելույթներ ունեցա, այնքան

առանձնացան իմ համախոհները, որ կազմակերպությունը տրոհվեց երկու մասի: Մի մասը մնաց նախկին շենքում, որտեղ մենք մեր նիստերն էինք գումարում, և կոչվեց «Զորավիգ»: Նրա խնդիրն էր ի մի բերել և պաշտպան դառնալ ինքնաբերաբար ստեղծված ժողովրդական ինքնապաշտպանական ջոկատներին, որ արդեն գործում էին ինչպես Երևանում, այնպես էլ Հայաստանի տարբեր շրջաններում: Դրանից հետո էր, որ ստեղծվեց «Նախախորհրդարանը» Ֆելիքս Սաֆարյանի* ջանքերով. արդեն հույս կար, որ շատ շուտով բոլշևիկյան տոտալիտար վարչակարգը տապալվելու է և ծնվելու են նոր կառույցներ: Ես դարձա «Նախախորհրդարանի» ռազմական գործի հանձնաժողովի ղեկավար դեմքը:

Եվ անա, երբ արդեն ժողովուրդը մեր մասին գիտեր, մի օր մեր նիստին ներկայացավ Ռազմիկ Վասիլյանը և խնդրեց, որ կազմակերպության որոշ անդամներ ներկա լինեն իրենց կողմից հրավիրվող հանրահավաքին և ելույթ ունենան: Նա արդեն հանդես էր գալիս որպես նորաստեղծ Հայոց ազգային բանակի՝ ՀԱԲ-ի հրամանատար, սա արդեն 89 թ. հուլիսին էր: Ես գնացի նրանց այդ հանրահավաքին, ելույթ ունեցա և հայտնեցի իմ հիմնական այն միտքը, որ ժամանակը, ստեղծված իրավիճակը պահանջում է քաղաքական պայքարից զատ մղել նաև զինված պայքար, շեշտեցի անհապաղ ազգային բանակ ստեղծելու անհրաժեշտությունը: Վասիլյանը երևի թե ճիշտ հասկացավ իմ ելույթի իմաստը: Նրա կեսէջանոց ծրագիրը ընդամենը չորս կետ էր պարունակում, հիմնական միտքն այն էր, որ ՀԱԲ-ը կամավորական բանակ է և ոչ մի քաղաքական կուսակցության չի ենթարկվում, նրա հիմնական խնդիրը ազգի ինքնապաշտպանության կազմակերպումն է: Իմ ծրագիրն ավելի ընդարձակ ու հեռահար էր: Այդ ժամանակ ՀԱԲ-ի կազմում ընդամենը 30—40 մարդ կար: Բայց կարևորը գաղափարն էր, որ արդեն թևածում էր օդում. ի վերջո, ամենամեծ կենդանին՝ փիղն էլ է ծնվում մի փոքրիկ բջիջից:

Գաղափարը կար և պիտի մարմնացում ստանար, թեև «Ղարաբաղ» կոմիտե—2-ը ամեն կերպ խոչընդոտում էր: Բանն այն է, որ սումգայիթյան եղեռնից հետո այդ կոմիտեի

---

* *Օրերս հշտեցի, որ Ռաֆայել Համբարձումյանն է եղել նախաձեռնողը։*

անդամները քարոզում էին շիջնել թուրքերի մակարդակին, մինչև հիմա ականջիս մեջ հնչում են Աշոտ Մանուչարյանի խոսքերը, թե՝ Հայաստանում ոչ մի ադրբեջանցու քթից արյուն չպիտի հոսի, իսկ Խաչիկ Ստամբոլցյանն ասում էր՝ մենք քրիստոնյա ենք, մենք չպիտի իջնենք բարբարոսների մակարդակին, թուրքն էլ մարդ է, ինչու եք ուրախանում նրա մահով... Այս քարոզչությունը բարոյալքում էր այն ժողովրդին, որը հրեղեն ձիու պես ծառս էր եղել ու սպասում էր իր տիտանական հեծյալին, որը ուղղություն պիտի տար պայքարին: Մինչդեռ կատարվում էր հակառակը, և դա, իմ խորին համոզմամբ, գալիս էր վերևից: Վերև ասելով ես միայն կենտրոն չեմ հասկանում: Անհնար է հրապարակներում ազգային փրկության ծրագիր ստեղծել, դա ստեղծվում է մեծ տառապանքով, կորուստներով, տասնամյակների ինքնազոհողությամբ: Այդ առումով արժե հիշել Հայ Հեղափոխական Դաշնակցության հիմնադիրներին, որոնք զոհվում էին իրենց իսկ ձեռքով նոնակ պատրաստելիս... Իսկ Երևանում ուզում էին ամբոխավարությամբ լուծել Արցախի հարցը: «Ղարաբաղ» կոմիտե—2-ը խաղալով ամբոխի զգացմունքների վրա, Գորբաչովի արտահայտությամբ՝ «рвался к власти»: Հարկավոր էր մեր ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի դառն պատմության փորձից ելնելով՝ ստեղծել ազգային փրկության ծրագիր՝, հաշվի առնելով, որ մենք գտնվում ենք մի վիթխարի, թեկուզև փլուզվող կայսրության կրնկի տակ, կայսրություն, որի ոնրագործ քաղաքականության հետևանքով կորստյան էր մատնվել մեր պատմական հայրենիքի վիթխարի մասը, ժողովրդի երեք քառորդը: Եվ մեր ազգային փրկության ծրագիրը պիտի հյուսվեր տասնյակ սերունդների զգացմունքներից, մեր ցավից, մեր զարթնած գաղափարներից, մեր սթափ գնահատումներից, որպեսզի դրանով ղեկավարվելով՝ ժողովուրդը կարողանար հասնել իր երազած ափը: Ես չէի հավատում, թե սահմանադրական ճանապարհով մենք կարող ենք Արցախը միացնել Հայաստանին, տվյալ պահին մեզ համար առաջնահերթ խնդիրը ինքնապաշտպանության կազմակերպումն էր: Եվ իմ բոլոր ջանքերը նվիրված են եղել այդ նպատակին:

Վասիլյանի հրավերով նրանց հանդիպավաճում ելույթ

ունենալուց հետո պարզ դարձավ, որ ՀԱԲ-ը, իբրև այդպիսին, չի կայացել: Եվահա օգոստոսի 4-ի հանրահավաքում ելույթ ունենալով, ասացի, որ հենց այսօր ծնվում է Հայոց ազգային բանակը և առաջին անգամ հրապարակայնորեն մատյաններ դրեցինք, որ ցանկացողները զինվորագրվեն: Այդ օրը շուրջ երեք հազար մարդ զինվորագրվեց, տղամարդիկ էին, առանց տարիքի խտրականության, կանայք ու աղջիկներ: Այդ օրը զինվորագրվեց իմ ողջ ընտանիքը: Իսկ նույն ժամանակ ՀՀՇ-ականներն իրենց հանրահավաքներում ոչնչից չխորշելով մեզ վարկաբեկում էին. ասում էին՝ մենք մարդկանց ցուցակագրում ենք, որպեսզի ցուցակները հանձնենք ՊԱԿ-ին: Այդ պատճառով էլ որոշ ժամանակ մարդիկ երկմտում էին, դրժվարությամբ էին ներգրավվում մեր շարքերը: Իսկ երբ սահմանամերձ կռիվներում մեր ջոկատներն ապացուցեցին իրենց անձնուրացությունը, ժողովուրդը ոգևորվեց, կարողացավ ճեղքել հերյուրանքների ու խարդավանքների ոստայնը...

Մեր առաջնահերթ նպատակներից մեկը ՀԱԲ-ի կառուցվածքի ստեղծումն էր: Մենք հանգեցինք այն եզրակացության, որ անհրաժեշտ է հանրապետության սահմանի ողջ երկայնքով, Մեղրիից մինչև Նոյեմբերյան, ստեղծել շտաբներ, ռազմական համբարներ, որպեսզի կարողանանք ապահովել սահմանների անձեռնմխելիությունը: Այդ ժամանակ դեռ չունեինք ոչ նյութական, ոչ ռազմական համապատասխան ուժ Արցախին օգնելու համար, բայց գտնում էինք, որ Հայաստանի սահմանների ամրապնդումը ոչ միայն բարոյական, այլև ռազմական իմաստով արդեն իսկ օգնություն է Արցախին: Արցախցիներին օգնություն էինք ցույց տալու Հայաստանի սահմանները ամրացնելուց հետո միայն: Դա էր մեր ծրագիրը: Արդեն ուսումնասիրել էինք այն ճանապարհները, որոնցով մեծաքանակ ջոկատներ պիտի անցկացնեինք Արցախ, կապեր էինք հաստատել թե Հայաստանի և թե Արցախի սահմանամերձ շրջանների բնակչության, հիմնականում՝ երիտասարդների հետ, որոնք պիտի ապահովեին ջոկատների գիշերային անցումը եղանակային անբարենպաստ պայմաններում (Նժդեհը սիրում էր ասել՝ թշնամուն պիտի խփել եղանակային ամենաանբարենպաստ պայմաններում, երբ նա կուչ եկած՝ ոչ մի հարվածի չի սպասում):

Ամբողջ 89 թվականի ընթացքում մենք մի քանի շրջանում միայն կարողացանք ճամբար ստեղծել, քանի որ զինամթերք չկար: Մինչև 1990 թվականի Բաքվի կոտորածը ՀԱԲ-ի շարքերում ընդամենը 5—6 հազար մարդ կար. գործը դժվարությամբ էր առաջանում, կրկնում եմ՝ միջոցների պակասի պատճառով: Ինքս անձամբ, և մյուսները նույնպես, գնում էինք գործարաններ, ջոկատներ ստեղծում, 10—15 օրով ուղարկում ճամբարներ սահմանապահություն անելու. Ղրաբաղ մնում էին այնքան, ինչքան հերիքում էր հետները բերած ուտեստը: Մարդիկ, տեսնելով, որ ՀԱԲ-ը դառնում է իրենց պաշտպանը, օգնում էին՝ սնունդ, հագուստ, զենք, զինամթերք:

Բաքվի հայկական կոտորածների լուրն առնելուն պես, հիշում եմ, ժողովուրդը նորից ալեկոծվեց: Այն նույն հրապարակում, որտեղ ինձ պրովոկատոր էին կոչել, արդեն սկսեցին ինչել զենքի դիմելու կոչեր: Մինչև հիմա հիշում եմ Աշոտ Մանուչարյանի, Վանո Սիրադեղյանի ելույթները, որոնք, ժողովրդին դիմելով, ասում էին՝ դուք շատ լավ գիտեք, թե զենքերը որտեղ են և ինչպես պետք է ձեռք բերել: Այդ օրերին Կենտկոմի քարտուղար Սուրեն Հարությունյանի հեռուստատեսային ելույթից պարզ հասկացվեց, որ մեզ ոչ ոք չի պաշտպանելու, որ մենք մեր հույսը պետք է դնենք մեզ վրա, այսինքն՝ պիտի զինվենք ու ինքներս մեզ պաշտպանենք:

Հիմա այլևս ամենայն համոզվածությամբ կարող եմ ասել, որ զենք բռնագրավելու կոչը արվել է վերևից: Հիշում եմ, թե ինչպես միլիցիայի բաժանմունքից զանգահարեցին ՀԱԲ-ի զորակայան և ասացին, թե ինչո՞ւ չենք գնում զենքը վերցնելու, երբ ուրիշ ջոկատներ արդեն անում են նման բաներ: Եվ երբ մեր տղաները գնացել էին Խորհրդային շրջանի միլիցիայից զենքը «առգրավելու», պետի տեղակալ Մամյանն ասել էր՝ տղաներ, գոնե այնպիսի մի բան արեք, որ հասկացվի, թե բռնությամբ եք մեզնից զենքը խլում, չստացվի, թե մենք ենք կամովին ձեզ տալիս... Տղաներն էլ կրակել, շենքի ապակիները ջարդուփշուր էին արել, իսկ Մամյանը նեղացել էր դրանից, ասում էր՝ այս ցուրտ ձմռանը ոնց մնանք սառած շենքում:

Մի խոսքով, նման բաներ եղել են ամբողջ Հայաստանում: Այդ բոլորը եղել է ինչպես ինքնապաշտպանության բնազդով,

այնպես էլ կառավարության թելադրանքով: Կարող եմ նույնիսկ ասել՝ Մոսկվայի թելադրանքով: Կենտրոնը շատ էր ուզում, որ հայերի ու ադրբեջանցիների բախումը կայանա: Նրանք համոզված էին, որ Սումգայիթից հետո մենք պիտի որ Հայաստանի ադրբեջանցիների հետ բախվենք, բայց բանի որ ժողովուրդը հանրահավաքներում բարոյալքվել էր՝ այդպիսի բան տեղի չունեցավ: Ինձ հայտնի են դեպքեր, երբ հայ երիտասարդները բռնել են ադրբեջանցի կանանց, բայց ոչ կողոպտել են, ոչ էլ ծեծել ու բռնաբարել: Մեկը մյուսի երեսին նայելով ու աչքները արցունքոտելով՝ նրանց տարել, հասցրել են Նախիջևանի սահմանն ու ասել՝ գնացեք:

Այս առիթով ուզում եմ անդրադառնալ մի գաղափարի, որը թուրքը շատ լավ յուրացրել է: Նա բացահայտ ճակատում չէ, որ մեզ հաղթել է. տեղում բնաջնջել է հայությանը, իսկ մենք այդ բանը չենք արել: Խմբապետ Շավարշը՝ իրականում ազնվազույն ու արվեստի սիրահար մի մարդ, իր զորագնդով էրզրում գնալու ճանապարհին անցնում էր թուրքական գյուղերով, որոնց բնակչությունը տեսնելով, որ դիմադրել չի կարող, աղուհացով էր դիմավորում նրան: Եվ Շավարշը բավարարվում էր դրանով: Բայց երբ հարկադրված հանանջում էր, այդ նույն գյուղերը թիկունքից հարվածեցին նրան: Իսկ եթե Շավարշը թուրքի նման վարվեր, վերադարձին դիմադրության չէր հանդիպի: Մենք պիտի թուրքից սովորենք: Այդ նույն սխալն արել են նաև Նժդեհն ու Անդրանիկը: Զանգեզուրում Լեռնահայաստանի հանրապետությունն ստեղծելիս Նժդեհը ոչ թե բնաջնջեց, այլ Նախիջևան քշեց թուրքական ուր գյուղի բնակչությանը, որը այնտեղ թուրքերին միանալով՝ կոտորեց Նախիջևանի հայությանը և, ի վերջո, դատարկվեց Նժդեհի հայրենի եզերքը: Սա գալիս է քրիստոնեությունից: Ես չեմ ընդունում քրիստոնեությունը որպես ազգային կրոն. ամեն ազգ ինքն է ստեղծում իր կրոնը, ուրիշի հայրը չի կարող քո հայրը լինել, ուրիշի մայրը քո մայրը չէ: Քրիստոսը ծնվել է ուրիշ նպատակների համար, ինչպես մյուս բոլոր աստվածությունները: Ամեն ազգ ինքն է ստեղծում իր փրկության ծրագիրն ու կոչում աստված այս կամ այն անունով: Սա իմ համոզմունքն է, որ խոր գիտական հիմքեր ունի: Եթե Անդրանիկը Նախիջևանը գրավելով՝ թուրքի փորձը կիրառեր,

ապա այսօր Նախիջևանը չէր լինի Ադրբեջանի կազմում: Անդրանիկի բրիստոնեական այդ «մեղքին» ավելանում է նաև նրա ռուս-բոլշևիկյան կողմնորոշումը, որը Հովհ. Թումանյանի ազդեցության արդյունքն էր: Թե չէ՝ միայն զարմանալ կարելի է, որ Նախիջևանը ազատելով՝ միացնում է ոչ թե Հայաստանի Հանրապետությանը, այլ թողնում է բոլշևիկյան Ռուսաստանի տրամադրության տակ: Ես, իհարկե, խոնարհվում եմ Անդրանիկի մեծության առաջ, բայց պատմությունն էլ հենց նրա համար է պատմություն, որ թելադրում է չկրկնել սխալները:

Նորից հետ դառնալով 1990 թ. Բաքվի հունվարյան դեպքերին հաջորդած իրադրությանը, ասեմ, որ ՀԱԲ-ն սկսեց Սասունցի Դավթի պես ոչ թե օրով, այլ ժամով մեծանալ: Օր էր լինում՝ տասը հազար մարդ էր դիմում նրա շարքերն ընդունվելու համար: Մենք սկսեցինք վերցնել նաև բուների ռազմական ամբիոնների ուսումնական զենքը, ԴՕՍԱԱՖ-ի դպրոցների տանկերը, զրահամեքենաները, հրետանին, որոնց մի մասը փչացած էր, մի մասը՝ մասնատված, դրանք մեր շնորհալի վարպետների ձեռքերով արագ վերանորոգվում ու տրվում էին ջոկատներին: Այդ տեխնիկան էր, որ վճռական դեր կատարեց Երասխի կռիվներում: Մինչ այդ սահմանապահ գյուղերի ջոկատների ձեռքին ընդամենը որսորդական հրացաններ էին: Իսկ այդ զենքով մենք ոչ միայն հետ էինք մղում ադրբեջանցիներին, այլև լուծնում էինք նրանց կրակակետերը: Եվ եթե չլիներ ՀՀՇ-ի քարոզչությունը, մենք կարող էինք գրավել Նախիջևանը, ոչ թե նրա համար, որ այն ազատենք ու միացնենք Հայաստանին,— մենք այդքան միամիտ չէինք ու գիտենք ինչ ուժի հետ գործ ունենք,— պարզապես Սումգայիթի հակակշիռը կլիներ և լավ դաս ադրբեջանցիներին:

Այդ օրից սկսած ՀԱԲ-ը դարձավ հանրապետությունում հռչակված ռազմական ուժ և սահմանային բոլոր ընդհարումների ժամանակ մյուս զինված ջոկատներն անպայման հաշվի էին նստում ՀԱԲ-ի ղեկավարության հետ, համագործակցում էին, համատեղ գործողություններ էին ձեռնարկում: Պիտի ասեմ, որ ոչ ես, ոչ էլ Բազմիկ Վասիլյանը որևէ հավակնություն չունեինք հրամանատար դառնալու, պարզապես խորը գիտակցում էինք, որ մեր ազգը պիտի բանակ ծնի, որ պաշտ-

պանի պետությանը: Ինվող երեխան պիտի խնամակալ ունենա, այլապես գոյատևելու երաշխիք չի ունենա: Ինվող պետության դայակը բանակն է: Սա իմ խորին համոզմունքն է:

Այդ օրերին Ռ. Վասիլյանի ու ինձ հետ հանդիպումներ են ունեցել կուսակցության ու կառավարության ղեկավարները, որոնք հիացմունքի ու շնորհակալության խոսքեր են ասել մեզ, բայց բարոյական այդ աջակցությունից զատ նրանցից որևէ օգնություն չենք ստացել: Մենք զեկուցագրով դիմեցինք Մինիստրների խորհրդի նախագահ Վլ. Մարգարյանցին, խնդրելով բեռնատար ու մարդատար ավտոմեքենաներ (ՈՒԱԶ, «Նիվա») տալ արագ տեղաշարժերի համար: Նա խոստացավ, բայց չտվեց, և այդ պատճառով էլ ստիպված էինք լինում դիմել հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարներին ու ստացականով ժամանակավորապես վերցնել նրանց մեքենաները: Դա առիթ դարձավ, որ հետագայում, ինձ ու Վասիլյանին ձերբակալելուց հետո, մեզ մեղադրեն հափշտակության մեջ...

Ուրեմն, 1990 թականին արդեն Մեղրիից մինչև Նոյեմբերյան սահմանի երկայնքով ունեինք շտաբներ ու ռազմական համբարներ, որտեղ ռազմական դաստիարակություն էին ստանում ոչ միայն տեղերի երիտասարդները, այլև Երևանից, մյուս քաղաքներից ու շրջաններից հավաքված կամավորականները: Արդեն 160 հազար մարդ կար մեր շարքերում: Ի դեպ, այս թիվը ծաղրուծանակի ենթարկվեց թե՛ ՀՀՇ-ի, թե՛ Կենտրոնի կողմից: Մոսկվայում հրատարակվող ինչ-որ մի կոմերցիոն թերթ գրեց, թե ՀԱԲ-ը ընդամենը 350 հոգուց բաղկացած մի ավազակախումբ է, որը հիմնականում զբաղվում է անասնագողությամբ: Ադրբեջանցիներից անասուն է գողանում ու վաճառում հայերին, Հայաստանից գողացածն էլ՝ ադրբեջանցիներին. դրանով մտածված թշնամություն էր սերմանվում հարևան երկու ժողովուրդների միջև, ավելի շուտ՝ բորբոքվում էր արդեն ծայր առած թշնամությունը: ՀՀՇ-ն պրովոկացիա որակեց նաև Նոյեմբերյանի երկրորդ կոիվը (1990 թ. օգոստոսի 19—21-ը), մինչդեռ մեր խնդիրն էր բացել մարտ ամսից փակված Իջևան—Նոյեմբերյան մայրուղին, գիտենալով, թե այդ շրջափակումը տնտեսական ինչ մեծ վնասներ է հասցնում հանրապետությանը: Ասեմ նաև, որ մինչ այդ Բաղանիս և Ոսկեպար գյուղերի արևմում շուրջ 50 հոգի

անհետ կորել էին իրենց ավտոմեքենաներով. դրանք հայ մարդիկ էին՝ կին, տղամարդ, երեխա, ու դա լցրել էր տեղացիների համբերության բաժակը: Թուրքերը օգոստոսի 19-ին մի ավտոմեքենա էին կանգնեցրել, որի մեջ երեք հայ տղամարդիկ էին եղել, մեկը՝ իր կնոջ հետ: Մեր ջոկատի տղաները ռացիայով պատահաբար լսել էին թուրքերի խոսակցությունը, որոնք ասում էին, թե՝ հայերի ենք բռնել, մեկի կինն էլ հետներն է, շատ լավիկն է, շուտ արեք, եկեք, թե չէ՝ ձեզ բաժին չի մնա... Տղաները էլ չէին համբերել, և տեղի էր ունեցել ընդհարումը: Բայց ես զորակայանից հրաման ունեի, որ գնայի ու հետ բերեի ջոկատը, որն այնտեղ էր հասել Վարդենիսից: Կառավարությունը խոստանում էր բանակցությունների միջոցով բացել այդ մայրուղին: Հետո միայն համոզվեցինք, որ նա անկարող էր կամ գուցե թե ցանք էլ չթափեց: Մայրուղին մինչև օրս էլ փակ է, և մեր սահմանային գյուղերը անվերջ ենթարկվում են գնդակոծության: Իսկ եթե այն ժամանակ մենք մի փոքր ավելի վճռական լինեինք...

Մենք ծրագրել էինք ամրացնել Հայաստանի հյուսիսային երկու դարպասները և շատ մեծ կարևորություն էինք տալիս դրան: Բանն այն է, որ Ղազախի ու Մառնեուլի դեմ-դիմաց, արդեն Հայաստանի տարածքում, կան թուրքաբնակ գյուղեր, որոնք մեզ համար շատ վտանգավոր են: Դրանց անհապաղ գրավումը ստրատեգիական առումով շատ անհրաժեշտ էր: Այդ գյուղերի պատճառով է, որ Իշխան—Նոյեմբերյան մայրուղին մինչև օրս չի գործում, դրանք են, որ մեզ հանգիստ չեն թողնում մեր իսկ տան մեջ և մեծ վնաս են պատճառում ամեն առիթով:

Հարցնում եք, թե, այնուամենայնիվ, ինչպե՞ս պատահեց, որ զանազան քրեական տարրեր, առանձին հանցագործ խմբեր, մտնելով ՀԱԲ-ի շարքերը, կատարեցին անօրինական գործողություններ և վարկաբեկեցին մեզ: Պիտի նախ հիշել այն պայմանները, որոնցում սաղմնավորվեց, ապա և ձևավորվեց ՀԱԲ-ը: Դրանք, ինչպես ասում են, էքստրեմալ պայմաններ էին, և մենք չէինք կարող թուրքին ասել՝ դու սպասիր, մինչև մեր կանոնավոր բանակը ստեղծենք, ուսումնարաններում ռազմական պատրաստություն անցնենք, ռազմական կարգուկանոն սովորենք, բարոյական կրթություն տանք

մեր զինվորներին և նոր միայն բերեմ քո դեմ կռվելու: Մեր առջև դրված էր օրհասական հարց՝ դիմել զենքի, ինքնապաշտպանության նպատակով: Զենք ասելով՝ ես հասկանում եմ ամեն բան, ես իմ հենց առաջին ելույթներում եմ դա ասել, — զենք է բռունցքը, քարը, մահակը: Մարդ նախ գաղափարապես է զինվում, որ թշնամուն հակադրվի, հետո նոր ձեռքն է առնում զանազան իրեր, առարկաներ, որոնք կարող են շատ թե քիչ արդյունավետ լինել: Ինչ խոսք, ամենաարդյունավետը զենքն է, հրազենը, մանավանդ՝ ծանր: Մինչև դրան հասնելը շատ ժամանակ կար: Երբ ՀՀՇ-ականները ծաղրուծանակի էին ենթարկում ՀԱԲ-ը և ասում էին՝ եղած-չեղածը մի հաբ է, կուլ կտանք, կգնա, ես նրանց պատասխանում էի այսպես. Զորավար Անդրանիկը, որ ծնվեց՝ կաթ էր ուտում, ոչ մի բան չգիտեր, չէր քայլում, ուրեմն եկեք նրան էլ ծաղրուծանակի ենթարկենք, ասելով՝ նա ինչ զորավար էր որ: Մինչդեռ նա պիտի հասունանար, նոր զորավար դառնար: Այդպես էր նաև ՀԱԲ-ը. ծնվել էր, պիտի զորանար, դառնար ազգային բանակ, եթե հայ ժողովուրդը դա ցանկանար, որովհետև միայն ազգի կամքով է ծնված մանուկը դառնում ազգային հերոս. չլիներ այդ կամքը՝ Անդրանիկը զորավար չէր դառնա:

Մեր բանակը ծնվել էր կամավորական հիմունքներով. մենք ունեինք դիմումի հատուկ ձև, որտեղ գրված էր. ես, այսինչ-այսինչյանս, կամավոր մտնում եմ Հայոց ազգային բանակի շարքերը և երդվում եմ ազնվորեն ծառայել իմ ազգին, պայքարել ազատ, անկախ և միացյալ Հայաստանի համար: Սա եղել է նաև մեր երդումը: Ինչպես հայտնի է, ամեն մարդ կարող է երդում տալ, բայց ամեն մարդ չէ, որ պահում է, դրա համար էլ կա երդմնազանց բառը: Երդմնազանցների հանդեպ ՀԱԲ-ը ուներ իր պատժիչ միջոցները, ընդհուպ մինչև ռազմական դատարանը: Բայց քանի որ, այնուամենայնիվ, մենք իրավաբանական մարմին չէինք, օժտված չէինք ազգի բոլոր խնդիրները լուծելու իրավասություններով, ուստի որոշ կարգի հանցագործների տալիս էինք իրավապահ մարմինների ձեռքը: Խոսքը երդում տված մարդկանց մասին է: Այդպիսի հանցագործներ եղել են: Օրինակ, Մեխակ անունով մեկը կար, որը մեր կողմից երկու անգամ պատժվել և ապա հանձնվել է իրավապահ մարմիններին, նույնիսկ բերդ

է նստել, բայց հետո ազատվել է ավելի շուտ, քան մենք, որ ոչ մի հանցանք չէինք կատարել: Վերջում պարզվեց, որ այդ մարդը ծառայել էր ՊԱԿ-ին, միլիցիային, մի խոսքով՝ օտար տարր էր մեր շարքերում, թեև կամավոր եկել, երդում էր տվել: Կոիվներին մասնակցել էր, բայց հետագայում շարաշահել էր ՀԱԲ-ի անունը, նույնիսկ բռնաբարություն էր կատարել, գույք էր թալանել, մարդ էր ծեծել, մեքենա էր փախցրել: Սակայն այդ ամենը նրան ներվեց, որովհետև, կրկնում եմ, նախկին կագեբեական էր եղել, միլիցիայում էր աշխատել, իսկ մենք այդ բոլորը չգիտեինք: Այդպիսի մարդիկ, ինչպես նաև այլ կարգի հանցագործներ եղել են և չէին կարող չլինել: Եթե կանոնավոր բանակում կան հանցագործներ, այն էլ՝ ոչ քիչ, ապա կամավորականում կլինեն ու կլինեն: Սրանով չեմ ուզում ասել, թե մենք ամեն առումով անմեղ էինք: Մենք մեր դաստիարակչական աշխատանքը ինքնավորին չափով անում էինք, բայց ուզում եմ ասել, որ դա անխուսափելի էր, մարդիկ գալիս, խնդրում էին ծառայել հայրենիքին, ես ինչ իրավունքով պիտի նրանց մերժեի, քանի որ չգիտեի նրանց ով և ինչ լինելը: Դրա հնարավորությունը չկար էլ: Դա պարզվում է ժամանակի, կոնկրետ գործողությունների ընթացքում:

Այնպես որ՝ նման մեղադրանքներով ՀԱԲ-ին վարկաբեկելը համարում եմ անհիմն: Մենք, վերջին հաշվով, գործել ենք խորհրդային իրավակարգի պայմաններում, իսկ այդ իրավակարգում գործում էր ՊԱԿ-ը (մինչև այսօր էլ գործում է), որը շատ լավ գիտե, թե ում ինչպես վարկաբեկի: Այս բանը ես ասում եմ բացահայտ և պատասխանատու եմ իմ խոսքերի համար: ՊԱԿ-ի հանձնարարությամբ մարդիկ, ամբողջական ջոկատներ մտնում էին ՀԱԲ-ի շարքերը և կատարում էին հանցագործություններ՝ մեր անունը պախարակելու նպատակով: Մարդիկ էլ կային, որ ՀԱԲ-ի անդամ չէին, բայց ամեն տեղ ներկայանում էին իբրև այդպիսին: Օրինակ. ինձ մոտ եկավ Էջմիածնի ջոկատից մի խումբ. ասացին, որ ուզում են մտնել ՀԱԲ-ի մեջ: Հետաքրքրվեցի, թե ովքեր են այդ տղաները: Պարզվեց, որ Նահատակյանի ջոկատից են, իսկ Նահատակյանը բացահայտ ՀՀՇ-ական էր, նրա՝ ջոկատը կռվել էր Բերդաձորում, ես դա շատ լավ գիտեի: Եվ ահա այդ

տղաներն ասացին, որ հեռանում են այն պատճառով, որ իրենց հրամանատարը զբաղվում է խաղամականությամբ, իսկ իրենք ուզում են հայրենիքի համար կռվել: Ես նրանց ասացի՝ կգնամ, այս-այս-այս նախապատրաստական աշխատանքները կանեք, ես կգամ, կստգուեմ, որից հետո կորոշենք: Մի շաբաթ անց որոշեցի հանդիպել նրանց: Պարզվեց, որ այդ մի շաբաթվա ընթացքում խմբի տղաները զավթել են լքված մի շենք, որի բակում արդեն շարված էին 27 բռնագրավված մեքենա: Այդ բոլոր. մեքենաների վրա գրված էր ՀԱԲ: Ավելին, նրանք շրջանի ունևոր խաղամացիներին ստիպել էին մեծ գումարներ տալ: Շենքի հակատին փակցրել էին «ՀԱԲ-ի շտաբ» ցուցանակ՝ առանց մեր գրավոր կամ բանավոր համաձայնությունն ունենալու: Մինչդեռ մենք որևէ շրջանում շտաբ ստեղծելիս հավաքի միջոցով անպայման տեղյակ էինք պահում ժողովրդին, դրանից հետո միայն տալիս էինք կնիք, բլանկ և մյուս բոլոր անհրաժեշտ բաները, նշանակում էինք շտաբի պետ, տեղակալ, անպայման ունենում էինք բոլոր անդամների ցուցակը, գիտեինք, թե յուրաքանչյուրը ինչ մասնագիտության տեր է, զենքի որ տեսակին է տիրապետում: Մի խոսքով, այս ամենը չէր արված, բանավոր խոսքից հետո գնացել ու իսկույն գործի էին անցել: Ես նրանց պարտադրեցի, որ իսկույն հետ վերադարձնեն մեքենաները և այլևս մեր անունից շանտաժի չենթարկեն խաղամացիներին: Բայց դրանից հետո անգամ Հոկտեմբերյանի մեր ջոկատի հրամանատարը այնտեղ բռնում է մի քանի հոգու՝ մեքենա կողոպտելու պահին, մեքենան վերադարձնում է տիրոջը, արձանագրություն կազմում ու նրանց հանձնում միլիցիայի ձեռքը: Նման արարքները դիտավորյալ վերագրվում էին ՀԱԲ-ին՝ ժողովրդի մեջ մեր հանդեպ անվստահություն սերմանելու նպատակով:

Հիշում եմ այսպիսի մի զավեշտական դեպք, որ կարող էր նաև ողբերգությամբ վերջանալ: Մեր զորակայան զանգահարեցին ու ասացին, որ «Սևան» ռեստորանում մի խումբ տղաներ կռվում են, և կարող է արյունահեղություն լինել: Մերոնք իսկույն գնացին այնտեղ՝ պարզելու իրողությունը: Մինչ նրանք հերսում կպարզեին միջադեպը, կռվող տղաներից մեկը դուրս է գալիս, հափշտակում մեր ՀԱԲ-ի

մեքենան, խմած վիճակում քշում և վթարի ենթարկվում: Նրան բերեցին մեր շտաբը: Երբ հարցրինք իր ով լինելը, նա ասաց՝ «Ես ՀԱԲ-ից եմ, այս մեքենան էլ ինձ տվել է պարոն Վարդանը»: Ասացի՝ «Տղա ջան, հապա նայիր, այս նստածների մեջ պարոն Վարդանը կա՞»: Նայեց, նայեց ու ասաց՝ «Չէ, չկա»... Հետո պարզվեց, որ ՀՀՇ-ական է, ռեստորանից խմած դուրս է եկել ու մտածել՝ դե որ բոլորը մեքենա են հափշտակում, արի մեկն էլ ես ձեռքս գցեմ: Հենց ինքն էլ այսպես խոստովանեց...

Այսպիսի դեպքեր շատ են եղել: Օրինակ, երկու եղբայր կային, մեկը ՀՀՇ-ական էր, մյուսը՝ ՀԱԲ-ից: Առաջինը մեքենա էր գողացել, գույք էր բռնագրավել ու ներկայացել որպես ՀԱԲ-ի զինվոր: Մեր հատուկ ջոկատը նրան բռնեց, բերեց շտաբ, և մյուս եղբայրը, որ մեր զինվորն էր, մեր աչքի առաջ մեռցնելու չափ ծեծեց նրան՝ ՀԱԲ-ի անունը վարկաբեկելու համար: Պարզվեց, որ մինչ այդ էլ նրանք տանը անհաշտ են եղել...

1990 թ. ապրիլ ամսին լուր ստացանք, որ ՊԱԿ-ը նախապատրաստում է ՀԱԲ-ի և ՀՀՇ-ի բախումը: Իհարկե, դա մեզ հանկարծակիի չբերեց, նման բանի սպասում էինք դեռ այն օրվանից, երբ օպերայի հրապարակում նրանք բռնագրավեցին կամավոր ցուցակագրվողների մատյանները: Իսկ մինչ այդ մի քանի անգամ Մոսկվայից եկան զանազան մեծապատիվ պաշտոնյաներ, եկավ գեներալ-մայոր Շատալինը (ի դեպ, նրանց բոլորի հետ հանդիպել ու բանակցել եմ ես, քանի որ այդ ժամանակ Ռազմիկ Վասիլյանը կալանված էր Կրասնոդարում, մենք նրա պատիվը պահելու նպատակով նոր գլխավոր հրամանատար չէինք նշանակել, ես էլ ՀԱԲ-ի ռազմական խորհրդի նախագահն էի): Նրանց միակ նպատակն այն էր, որ ՀԱԲ-ը կամավոր զինաթափվի: Ես Շատալինին ասացի, որ արդեն հանձնել ենք խորհրդային բանակից վերցված ծանր ռազմական տեխնիկան, հետ են վերադարձված ԴՕՍԱԱՖ-ի ուսումնական զինատեսակները, մեր ձեռքին մնացել են ընդամենը ուսուցողական ավտոմատներ, կարաբիններ ու որսորդական հրացաններ ու մեր կոնստրուկտորների սարքած ինքնաշեն զենքերը, որոնք երբեք չենք հանձնի, քանի որ մեր

նպատակը Հայաստանի սահմանները թուրքերի ոտնձգություններից պաշտպանելն է: Ասացի՝ այս պայքարը վերջ չունեցող պայքար է, այլևս ոչ մի հայ մարդ բարոյական իրավունք չունի անգեն ապրելու, մենք չենք զինաթափվի, ինչ միջոցների էլ դիմեք: Շատալինը բոլոր ձևերին դիմեց՝ ինձ վրա ազդելու համար, վերջում էլ ասաց, թե, իհարկե, մենք առնակատման չենք դիմի, բայց նիշտը զինաթափվելն է, մենք կհամոզենք նաև ադրբեջանցիներին, որ նրանք էլ զինաթափվեն: Ասացի՝ մեր ականջին այդպիսի երգեր ֆրանսիացիներն էլ են երգել՝ մեր արյունով նվաճված Կիլիկիան թուրքերին հանձնելով, երգել են բոլշևիկները՝ Նախիջևանն ու Արցախը թուրքերին նվիրելով և այլն: Քանի ես կենդանի եմ, ասացի, զենքը վայր չեմ դնելու, այդպես էլ իմ յուրաքանչյուր զինվորը: Ինչ ուժ էլ որ դուրս գա մեր դեմ զինաթափելու նպատակով, մենք կկռվենք մինչև մեր վերջին փամփուշտը...

Շատալինը վերջնականապես համոզվեց, որ մենք զինաթափվելու մտադրություն չունենք: Անա այդ ժամանակ էր, որ որոշեցին գործի դնել ՊԱԿ-ի զենքը՝ իրար դեմ հանել հրոչակված ՀՀՇ-ն ու նույնքան հռչակված ՀԱԲ-ը:

Պիտի ասեմ, որ ես այն անձնավորությունն էի, որ դեռևս «Զորավիգում» ռազմաքաղաքական աշխատանք կատարելու ժամանակ (ՀԱԲ-ի գոյության մասին դեռ չգիտեի) ձգտել եմ, որ ՀՀՇ-ի ջոկատներն էլ միանան մեզ, միասին պատրաստվենք մարտական նանապարհ անցած մեր սպայակույտի գլխավորությամբ: ՀՀՇ-ի պարագլուխները ոչ մի կերպ չհամաձայնվեցին: Մենք քանիցս հրավիրել ենք Վազգեն Մանուկյանին, Աշոտ Մանուչարյանին, մյուսներին. նրանք երկար ժամանակ չէին գալիս, իսկ գալուց հետո էլ որևէ ընդառաջ քայլ չկատարեցին: Բայց երբ 90 թ. ՀԱԲ-ը արդեն հզորացել էր՝ արդեն նրանք էին առաջարկում, որ մեր ջոկատները միանան իրենց խմբերին: Մենք անվերջ պնդում էինք այն միտքը, որ քաղաքական կուսակցություններն իրավունք չունեն զինված ուժեր պահելու, դա շատ վտանգավոր է, պատմության դառը փորձը դա արդեն ապացուցել է հանձինս բոլշևիզմի ու գերմանական ֆաշիզմի, որոնք, ունենալով հրսկայական զինված ուժ իրենց կուսակցությունների տրամադրության տակ, ստեղծեցին ամենաանմարդկային հասարա-

կարգը և ամբողջ աշխարհը հերքաշեցին աղետի մեջ: Սրանից ելնելով էր, որ գտնում էինք, թե հիշտը բոլոր զինված խմբավորումներն ընդհանուր մի կազմի մեջ միավորելն է, որ կովելիս լինի մեկ ընդհանուր ռազմավարությամբ, այլապես չհամաձայնեցված գործողությունները կարող են տապալել ամբողջ գործը: Իմ ծրագիրն այն էր, որ ստեղծվի միացյալ ռազմաքաղաքական խորհուրդ, որն էլ կգլխավորի ամբողջ զինական ուժը:

Երկար ջանքերից հետո, ի վերջո, հաջողվեց համոզել բանակցելու նստել: Մեր հիստերը տեղի էին ունենում ԱԻՄ-ի գրասենյակում, հարտարապետների տանը: Դրանց մասնակցել են Լ. Տեր-Պետրոսյանը, Վ. Մանուկյանը, Վ. Սիրադեղյանը, Ա. Մանուշարյանը, Վ. Սարգսյանը, ՀԱԲ-ի կողմից եղել եմ ես կամ իմ տեղակալը՝ Էդիկ Գևորգյանը, քանի որ, ասացի, Ռ. Վասիլյանն այդ ժամանակ Կրասնոդարում կալանված էր: Ստեղծվեց համապատասխան ծրագիր. ռազմաքաղաքական խորհուրդ ստեղծելու իմ առաջարկն ընդունվեց: Համաձայնության եկանք, որ ոչ մեկը առանց մյուսներին տեղյակ պահելու որևէ ռազմական գործողություն չսկսի, եթե ծրագրվում է որևէ քայլ, ապա պիտի անպայման արվի ռազմաքաղաքական խորհրդի գիտությամբ:

Բայց ահա Նյուվադիի դեպքը եկավ հաստատելու, որ իրականում որևէ համաձայնություն չէր կայացել: Դեպքից ուղիղ չորս օր առաջ ինձ տեղեկացրին, որ ՀՀՇ-ն ուզում է Մեղրու շրջանի Նյուվադի ադրբեջանական գյուղին հարվածել, քանի որ այդ գյուղի բնակչությունը շարունակ նեղում էր հայկական գյուղերի բնակչությանը: Այդ լուրն առնելով՝ գնացի ՀՀՇ-ի ղեկավարների մոտ, ասացի՝ եթե այդպիսի ծրագիր ունեք, եկեք ընդհանուր ստրատեգիա մշակենք, մանավանդ որ արդեն ունեի նախօրոք մշակված ծրագիր, մենք պարզապես սպասում էինք հարմար պահի: Նրանք ինձ մանրամասն տեղյակ չպահեցին իրենց մտադրություններին, բայց երբ տեսան, որ իմ առաջարկած ծրագիրն ավելի պարզ ու մատչելի է, ասացին՝ լավ, մենք մենակ ոչինչ չենք անի, կհավաքվենք ու միասին կվճռենք: Սակայն չորս օր անց իմացա, որ նրանք Նյուվադիին հարվածելու անհաջող փորձ են կա-

տարել, զոհեր են տվել և գյուղը ոչ միայն չեն ազատել, այլև իրենց անխոհեմ արարքի հետևանքով խորհրդային բանակի և ադրբեջանական օմօնի ջոկատները լցվեցին Նյուվադի... Ինչևէ, ահա այդ դեպքից հետո էր, որ իրավունք ունեցա ասելու, թե ՀՀՇ-ն տապալեց ընդհանուր գործը: Ռազմաքաղաքական խորհուրդը այդպես էլ չկայացավ:

Սակայն որոշ ժամանակ անց,— դա երևի ապրիլի վերջին էր կամ մայիսի սկզբին,— ինձ զանգահարեցին ու հրավիրեցին մինչ այդ ստեղծված Միացյալ ուժերի շտաբի (ՄՈՒՇ) նիստին: Այդ շտաբի մեջ մտնում էր նաև Ղարաբաղ կոմիտեի անդամ Սամսոն Ղազարյանը, որպես քաղղեկ, ջոկատի հրամանատարն էր Միշան՝ Վոժդը, որը հետագայում սպանվեց: Քանի որ միավորվելը իմ նպատակն էր, ուստի ես սիրով գնացի, և մինչև մայիսի 24-ը մենք ամեն օր հավաքվում ու քննարկում էինք մեր անելիքները, կազմում ծրագիր և կանոնադրություն, փորձում ընդհանուր պայմանավորվածություն ձեռք բերել: Բայց քննարկումների ընթացքում հասկացա, որ այդ ամենը ՀՀՇ-ի կողմից կրկին խաղ էր հետին նպատակներով:

Եկավ վերջին օրը, ծրագիրն ու կանոնադրությունը համարյա թե ընդունվել էին իմ ասածով, այսինքն՝ ռազմաքաղաքական խորհուրդը չպետք է ենթարկվեր որևէ կուսակցության. նրանում պիտի ընդգրկվեին զինված ջոկատների հրամանատարները և մեկ էլ քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչները, որոնք պիտի քաղաքական ուղղություն տային մեր գործողություններին:

Երբ ամեն ինչ պատրաստ էր, մենք մեր երակները կըտրեցինք, արյուններս խառնեցինք իրար (ներկա էին Վազգեն Սարգսյանը, Սամսոն Ղազարյանը, Միշան, Վրեժը, «Սասունցի Դավթի», Հայ դատի տղաները և էլի ուրիշներ) ու պիտի արդեն ստորագրեինք... Սակայն ասացի՝ տղաներ, եկեք ստորագրելուց առաջ մտածենք ստրատեգիական մի խնդիր, բոլորս միասին վերլուծենք, այդ գործողությունը կատարենք, մկրտվենք, նոր իրավունք ստանանք ստորագրելու այս փաստաթուղթը: Ես որևէ առարկություն չունեի ընդունված կետերի դեմ, դրանք հիմնականում իմ առաջարկություններն էին, այնպես որ՝ չհամաձայնվելու բան չունեի, բայց մի՞թե առանց

կովի մեջ մկրտվելու կարելի է դաշինք կնքել, մանավանդ ՀՀՇ-ի ջոկատների հետ, որ երբեք առիթ չէր եղել համատեղ որևէ մարտական գործողություն կատարելու: Ավելին, Կոռնիձորի առաջին կովի ժամանակ, երբ ռուսական բանակի ջոկատները հարձակվել էին մեզ վրա, և մենք ստիպված պիտի նահանջեինք, ՀՀՇ-ի հրամանատարներից մեկին խնդրեցինք, որ մեր նահանջը կրակով պաշտպանեն, նա ասաց՝ մեզ հրամայված չէ կրակել... Այնպես որ՝ նիշտն այն էր, որ կովի մեջ ապացուցվեր, թե մենք իսկապե՞ս եղբայրության դաշինք ենք կնքում, թե՞ խորամանկություններ ենք բանեցնում միմյանց հանդեպ:

Իմ ասածին բոլորը համաձայնեցին: Սակայն, չանցած շորս օր, տեղի ունեցան մայիսի 27-ի դեպքերը: Եթե հիշում եք, այդ օրը մի խումբ զինված տղաներ հարձակվել էին Կապանի գնացքն ուղեկցող ռուս զինվորների վրա՝ նրանցից զենք խլելու նպատակով: Զինվորները էլ պատասխան կրակ էին բացել: Եղան զոհեր:

Հենց այդ օրը, չեմ հիշում ինչ առիթով, տեղակալիս՝ Էդիկ Գևորգյանի հետ գնացել էի Աբովյան և մտածում էի գործն ավարտելուց հետո այդտեղից գնալ Սովետաշեն ու հանդիպել զորամասի հրամկազմի հետ: Բանն այն է, որ մի 4—5 օր առաջ ինձ մոտ էր եկել այնտեղ ծառայող մի հայ սպա ու ասել, որ հրամանատարության շրջանում լուր է տարածվել, թե իբր ՀԱԲ-ն ուզում է ռուս սպաների ընտանիքների հետ հաշվեհարդար տեսնել ու վռնդել Երևանից: Ես զարմացա: ՀԱԲ-ը ոչ միայն նման մտադրություն չուներ, այլև, հակառակը, ես, կարելի է ասել, մտերմական կապեր ունեի Սուրկովի և Պիշչևի հետ, առիթներ էին եղել, որ նրանք մեզ օգնել էին, բազմիցս նրանց ասել էի, որ բանակի դեմ երբեք առնակատման չենք գնա, մեր խնդիրը Հայաստանի սահմանները ադրբեջանցիների ոտնձգություններից պաշտպանելն է: Գլխումս իսկույն միտք ծագեց, որ դա ակնհայտ սադրանք է՝ Բաքվում ռուս զինվորականների ընտանիքներին ցույց տրված վայրենի վերաբերմունքի նիշտ հակակշիռը Երևանում ստեղծելու նպատակով: Այդ հայ սպային ասացի, որ նման բան բացառվում է և խոստացա հենց մոտ օրերս գնալ Սովետաշեն, անձամբ հրամանատարներին հավաս-

տիացնել, որ մեր կողմից նման անխոհեմ քայլ երբևէ չի կատարվի:

Եվ ահա հարմար պահ էր, Աբովյանից ուղևորվեցի դեպի Սովետաշեն: Սակայն դեռ տեղ չհասած, տեսանք. որ ճանապարհը երկու կողմից փակ է՝ ոչ ներքև կարող ենք գնալ, ոչ վերև: Հավաքված միլիցիոներներն ասացին, որ կայարանում առավոտյան կատարված դեպքից հետո խորհրդային զորքը մտել է Երևան և բնակչությանը կոտորում է: Ասացի՝ չի կարող նման բան պատահել, բայց ներկա գտնվողները հաստատեցին: Այդտեղից Շորբուլաղ գյուղով հասա Էրեբունի և ինչ տեսնեմ, մարդիկ բենզինով լի շշերը ձեռքներն. ուզում են պատրույգ դնել, որ գցեն տանկերի վրա:

Որ դա որոշակի ուժերի կազմակերպած սադրանք էր՝ այլևս կասկած չունեի:

Վերադարձա այնտեղ, ուր բեռնատար ավտոմեքենաները փակել էին ճանապարհը: Ճանապարհին մեր զինվորներից ում տեսա՝ ասացի, որ բոլոր հրամանատարներին գտնեն ու հայտնեն իմ հրամանը՝ իսկույն շտաբ վերադառնալու մասին: Նրանք ինձ ասացին, որ դեպքերին մասնակցելու որևէ հրաման չունեն և ինքնաբերաբար են եկել այդտեղ: Ես դեռ չգիտեի, թե Վասիլյանը որտեղ է, ինչ է մտածում: Վերադարձա զորակայան, Վասիլյանն այնտեղ էր, նա ասաց, որ արդեն գրավոր հրաման է ուղարկել ջոկատները հետ կանչելու:

Երբ ՀԱԲ-ի ջոկատները հեռացան միջադեպի վայրից, մյուս ջոկատները տեսնելով, որ իրենց ուժերով դիմակայել չեն կարող, նույնպես հետևեցին նրանց օրինակին, իսկ ովքեր որ մնացին՝ շատ զոհեր տվեցին: Զոհվեցին թե զինված տղաներ, թե խաղաղ բնակիչներ: Ասեմ նաև, որ եթե բանակն իսկապես հրաման ունենար Երևանի բնակչությանը կոտորելու, ապա դժվար չէ պատկերացնել, թե ինչ ողբերգություն էր լինելու:

Եթե հիշում եք, այդ օրերին կայացած միտինգներում ՀՀՇ-ականները մեղադրում էին ՀԱԲ-ին, թե իբր նրա ջոկատն է կայարանում հարձակվել Կապանի գնացքն ուղեկցող ռուս զինվորների վրա: Անգամ ասում էին, թե Արտաշատի Սամվելի ջոկատն է եղել, ոմանք էլ մեղադրեցին «Սասունցի Դա-

վիթ» ջոկատին և այլն: Բայց ես հո գիտեի, որ ՀԱԲ-ն այդտեղ որևէ մեղմ չունի և որոշեցի մի քննություն կատարել...

Ինձ հետ վերցրի երկու կանանց, նստեցինք մեքենա ու գնացինք կայարան, որտեղ տեղադրված էր ՀՀՇ-ի «Նժդեհի» շտաբը (նրանք շտաբ ունեին նաև Լենինյան շրջանում, իսկ ՀԱԲ-ը այդ երկու շրջաններում ընդհանրապես շտաբ չուներ): Իմ խորհրդով կանայք մտան «Նժդեհ» շտաբ և ներկայացան որպես մայրության ֆոնդի ներկայացուցիչներ և ասացին, որ ուզում են զոհվածների ընտանիքներին օգնություն ցույց տալ: Պարզվեց, որ այդտեղ զոհվածներին անուն առ անուն շատ լավ գիտեն, ընտանիքներին էլ են ճանաչում: Նույնը կրկնվեց Լենինյան շրջանի շտաբում, և մեզ համար այլևս ոչ մի կասկած չմնաց, որ զինվորների վրա հարձակվել են ՀՀՇ-ի տղաները: Այդտեղ մենք իմացանք նաև, որ ընդհարմանը վերջին պահին միացել է նաև այդ շտաբի պետը՝ իր մի քանի անդամներով: Մեզ մնում էր պարզել, թե ինչու էին դիմել նման քայլի:

Բանն այն էր, որ առաջիկայում, հունիս ամսին, սպասվում էր Գերագույն խորհրդի ընտրությունների առաջին փուլը: Հայտնի է, որ հիմնական մրցակիցները երկուսն էին՝ կոմկուսը և ՀՀՇ-ն, մյուս քաղաքական կազմակերպությունները պրոպագանդիստական լայն աշխատանք կատարելու հնարավորություն դեռ չունեին, մեր դասական կուսակցությունները դեռ Հայաստան չէին վերադարձել, ՀԱԲ-ը որևէ հավակնություն չուներ, քանի որ, ինչպես բազմիցս եմ ասել, այն ապակուսակցական կազմավորում էր: ՀՀՇ-ն նպատակ էր դրել խայտառակել կոմկուսին, նաև ՀԱԲ-ին, որին համարում էր կոմկուսի դրածո...

Այդ օրերին մամուլում անվերջ թմբկահարվում էր այն միտքը, թե՝ քանի որ կոմկուսն է մայիսի 27-ի դեպքերի սադրիչը, ուստի նրա մեղքով էլ չի բացահայտվում հանցագործությունը: Հիմա ես մի հարց եմ ուզում տալ այդ մեղադրանքի հեղինակներին, որը և կլինի ուղղակի պատասխան. եթե այդ ժամանակ իշխանության գլուխ կանգնած կոմունիստները իսկապես որևէ քայլ չարեցին հանցագործության մեղավորներին հայտնաբերելու և պատժելու ուղղությամբ, ապա ինչո՞ւ նրանց տապալումից հետո իշխանության գլուխ

անցած ՀՀՇ-ականները հրապարակ չեն հանում այդ մեծ ռնի-
ի մեղավորներին ու կազմակերպիչներին: Պատասխանը
մեկն է՝ հանցագործության թելերը ուղիղ տանում են դեպի
այդ կազմակերպություն: Ես գիտեմ, որ կոմունիստների ժա-
մանակ գործը հետաքննվում էր և ավարտվելու վրա էր,
բայց հետագայում փակվեց-գնաց: Զբացահայտվեցին նաև
Հայաստանում թունավորման բազմաթիվ դեպքերը, ՀԱԲ-ի
լուծարումից, նրա ղեկավարների ձերբակալումից հետո մեր
մի քանի հրամանատարների ու զինվորների այլևայլ պայ-
մաններում գնդակահարվելը...

Հարցնում եմ, թե, ինչպիսին էր ՀԱԲ-ի վերաբեր-
մունքը ընտրություններում հաղթանակած ՀՀՇ-ի հանդեպ:
Ասացի, որ մինչ այդ երկու կազմակերպությունների սկսած
մի քանի բանակցությունները արդյունք չէին տվել: Բայց,
երբ պաղամենտը ձևավորվեց, մենք մտածեցինք, որ ՀԱԲ-ը,
բնականաբար, պիտի դրվի նորընտիր Գերագույն խորհրդի և
ոչ թե ՀՀՇ-ի տրամադրության տակ: Ռազմական խորհրդի
հանձնարարությամբ ես հոչակագիր գրեցի, շարադրելով, թե
ինչ պայմաններով պիտի ՀԱԲ-ը ենթարկվի Գերագույն խոր-
հրդին: Որոշվեց, որ Ռազմիկ Վասիլյանը օգոստոսի 24-ին
ԳԽ-ի նիստում կարդա այդ հոչակագիրը: Մենք արդեն պատ-
ռաստ էինք բանակցությունների, մեր միակ նպատակն այն
էր, որ այդ գործն արվի փոխըմբռնումով. ՀԱԲ-ի այն զինվոր-
ները, ովքեր կամավոր կուզենային շարունակել հայրենիքի
պաշտպանությունը՝ կմնային, ովքեր կուզենային վերադառ-
նալ իրենց խաղաղ աշխատանքին՝ կգնային:

Սակայն Ռազմիկ Վասիլյանին մերժեցին մտնել Գերագույն
խորհրդի նիստերի դահլիճ, քանի որ նա կրում էր զինվորա-
կան համազգեստ ու զենք: Այդ պատճառով էլ Վասիլյանը
համաձայնության եկավ խորհրդարանի շեմ հիշում որ անդա-
մի հետ և հաջորդ օրն ասաց՝ ստիպված եմք քեզ խնդրել, որ
դու գնաս ու կարդաս մեր հոչակագիրը: Ինձ ուղեկից դրեց
մեր հրամանատարներից Մայիս Միրզոևին, երկուսս էլ ան-
զեն, ես՝ քաղաքացիական հագուստով, նա՝ զինվորական:
Մայիսը մնաց դրսում, ես մտա ներս: Նախասրահում նստած
էին մի աղջիկ և մի ավտոմատավոր զինվոր, որ աթոռին
ննջում էր: Երբ աղջկան ասացի, որ ես ՀԱԲ-ի քաղաքական

դեկավարն եմ, պայմանավորվածության համաձայն եկել եմ նիստում մեր հոչակագիրը կարդալու, հայտնեմ ում պետքն է, որ թույլ տան վեր բարձրանամ, ննջող ավտոմատավորը իսկույն սթափվեց,— նրա դեմքը հիմա չեմ հիշում,— հանգիստ նայեց ինձ, աղջիկը հեռախոսով չգիտեմ ում հետ խոսեց և ասաց, որ 10—15 րոպե հետո կարող եմ վեր բարձրանալ: Զինվորականը հարցրեց, թե զենք ունե՞մ, ասացի՝ ոչ, ես ամառային թեթև հագուստով էի, ձեռքիս պայուսակը շատ բարակ էր և չէր կարող զենք տեղավորել: Նա, առանց շոշափելու, թույլ տվեց, որ վեր բարձրանում: Բարձրացա երկրորդ հարկ, ճեմասրահում բազմաթիվ պատգամավորներ կային: Այդ պահին ուղիղ դիմացից գալիս էր Վազգեն Մանուկյանը՝ շատ մռայլ ու այլայլված: Ես նրան բարևեցի. շատ կոպիտ ասաց՝ ինչո՞ւ ես եկել, ես էլ թե՝ մեր պայմանավորվածության համաձայն եկել եմ մեր հոչակագիրը կարդալու: Նա ասաց՝ լավ, բայց նախ իջնենք, տեսնենք էդ ինչ կրակոց է: Ես զարմացա. ի՞նչ կրակոցի մասին կարող է խոսք լինել, ընդամենը 3—4 րոպե կլիներ, ինչ ներքևից բարձրացել էի, այնտեղ բան չէի նկատել: Այդուհանդերձ, իջանք՝ նա ինձ թևանցուկ արած: Առաջին հարկի նախասրահում 10—15 հոգի տաք վիճաբանության մեջ էին: Այդ պահին դրսից ներս էր մտել նաև Մայիս Միրզոևը: Մինչ հարցափորձով ուզում էինք պարզել, թե վերջապես ինչ է կատարվել, ով է կրակել, որտեղից, ում թելադրանքով և այլն, ինձ մոտեցավ ճակատը սև ժապավեն կապած, ավտոմատը ձեռքին ցածրահասակ մի զինվոր, և դառնալով ինձ, օձիքս բռնեց ու սպառնալից ասաց. «Ախ, այդ դո՞ւ ես պարոն Վարդանը, ես քեզ հիմա կգնդակահարեմ» և ավտոմատի փողն ուղղեց ինձ վրա: Ես զգացի, որ նրա այդ զայրույթը կարող է ինձ համար ճակատագրական ավարտ ունենալ, անմիջապես նրա ավտոմատի փողը բռնելով՝ բարձրացրի վեր և կանխեցի կրակոցը:

Ինչևէ, ես հասկացա, որ ուզում են թույլ չտալ, որ հոչակագիրը կարդամ: Ու Մայիս Միրզոևի հետ դուրս եկա այդտեղից, գնացի ՀԱԲ-ի գլխավոր ռազմակայան: Քիչ անց այդտեղ եկան նաև Սամսոն Ղազարյանը, Ազատ Արշակյանը, Վազգեն Սարգսյանը, Իգոր Մուրադյանը, էլի ուրիշ պատգամավորներ: Ուզում էին պարզել, թե վերջապես ինչ է կա-

տարվել: Պարզելով ինչն-ինչոց է, Սամսոն Ղազարյանը հեռախոսով կապվեց Բարկեն Արարքցյանի հետ, դեպքի առընչությամբ երկար խոսեց: Արարքցյանն ասաց, որ այդ օրը երեկոյան ժամը 8-ին ես գնամ իր մոտ և տանեմ հուշակագիրը: Այդպես էլ արեցի. իմ տեղակալ Էդիկ Գևորգյանի և Մայիս Միրզոևի հետ գնացի Բ. Արարքցյանի մոտ, ես նրան տվեցի հուշակագիրը, ասաց՝ «Մանոթ եմ, արի մի քիչ էլ սպասենք, հիմա շատ ենք ծանրաբեռնված, ի վերջո՝ նոր պետություն ենք ստեղծում, ամեն ինչ սկսում ենք զրոյից, ուզիղ մի շաբաթ հետո կնստենք, մեխանիզմներ կմշակենք, թե ինչպես պիտի ՀԱԲ-ը անցնի Գերագույն խորհրդի տրամադրության տակ» և այլն: Այդպես էլ պայմանավորվեցինք, որ մի շաբաթ հետո իրենք զանգ կտան, մեր Ռազմական խորհուրդը կգնա ու ամեն ինչ միասին կքննարկենք: Այդպես հաշտ ու հանգիստ այդտեղից դուրս եկանք ու դրսում հանդիպեցինք Զաուշին՝ իր ջոկատի տղաների հետ: Այդ ոստիկին չմտածեցի, թե նա ինչու է այդտեղ, բայց հետագայում, երբ այդ ամենը մտովի վերլուծում էի, հասկացա, որ գուցե Արարքցյանն է կանչել, իր ապահովության համար: Գուցեև սխալվում եմ: Ինչևէ, Զաուշի հետ ողջագուրվեցինք, համբուրվեցինք, նա ասաց՝ տղաներ, այս ինչ տեղը սեղան եմ գցել, եկեք միասին գնանք և այսքան կոիվներից հետո գոնե մի անգամ մարդավարի միասին հաց ուտենք: Ես մեծ սիրով կգնայի, բայց, ցավոք, արտասահմանցի մի քանի կարևոր մարդկանց հետ պայմանավորություն ունեի այդ ժամերին ռազմակայանում հանդիպելու, ուստի ասացի՝ Զաուշ ջան, շատ ցավում եմ, ես պիտի գնամ, եթե Էդիկն ու Մայիսը ուզում են՝ թող գան: Մեքենա նստեցի ու գնացի: Հաջորդ օրը Մայիսը պատմեց, որ շատ լավ ժամանակ են անցկացրել, ինքն իր ատրճանակը նվիրել է Զաուշին՝ ի նշան մարտական եղբայրության:

Այսպես ուրեմն, մեկ շաբաթ հետո հանդիպելու էինք Բ. Արարքցյանի, Վ. Սարգսյանի և մյուսների հետ, որ միասին մշակենք ՀԱԲ-ը ԳԽ-ի տրամադրության տակ դնելու համապատասխան մեխանիզմ: Ինչպես ասում են՝ ուրբաթը շուտ եկավ, քան շաբաթը:

Օգոստոսի 28-ի երեկոյան ժամը 11-ի մոտերքը ՀԱԲ-ի

գլխավոր զորակայան են գալիս մեզ ծանոթ մի քանի հոգի՝ ծեծված, մեքենաները վնասված, և պատմում, որ ՀՀՇ-ի մի ջոկատ տերուտնօրինություն է անում 26 կոմիսարների շրջանի այն բենզակայանում, որը մինչ այդ սպասարկում էր հիմնականում ՀԱԲ-ի մեքենաները: Այդ ժամանակ մենք դեռ գտնվում էինք 26 կոմիսարների շրջանի ԴՕՍԱԱՖ-ի շենքում և հսկողություն էինք սահմանել այդ բենզակայանի վրա, որպեսզի զանազան անկոչ զինված ջոկատներ բենզինը չկողոպտեն: Բենզակայանի աշխատողները, շրջակայքի բնակչությունը մեզ գիտեին: Եվ ահա նրանք պատմում են, որ ՀՀՇ-ականները բենզակայանում կամայականություն են անում, ում ուզում՝ տալիս են, ում չեն ուզում՝ կոպտում, հակառողներին ծեծում ու ճամփու են դնում: Այս պատմությունը լսելով՝ ՀԱԲ-ի մի ջոկատ Ռ. Վասիլյանի և Մ. Միրզոևի հետ գնում են՝ տեղում պարզելու իրավիճակը: Գնում են ու տեսնում ՀՀՇ-ի զինված ջոկատին՝ իր հրամանատարի հետ: Տղաները անմիջապես հայտնում են գալու նպատակը, իսկ նրանք ոչ այս, ոչ այն պատասխանում են, թե՝ չմոտենաք, կկրակենք: Միանգամից իրադրությունը սրվում է, բնդհարում է լինում: ՀԱԲ-ի կռիվներում փորձված տղաները արագ զինաթափում են նրանց, որից հետո վերադառնում են զորակայան, հրամանատարները ստուգում են պահակությունը, բարձրանում վեր՝ հանգստանալու... Նույն գիշերը՝ լույս 29-ի առավոտյան կատարվում է ամենադրամատիկականը: ՀԱԲ-ի գլխավոր զորակայանը չորս կողմից սկսում են գնդակոծել ՀՀՇ-ի զինված ջոկատները: Հետագայում թե շրջակա շենքերի բնակիչները, թե՛ կրակոցների ձայնից այդտեղ եկած մարդիկ վկայել են, որ զորակայանի վրա կրակել են բարձր դիրքերից՝ բնակելի շենքերից, մոտերքում գտնվող սպորտդպրոցից, «էրեբունի» հյուրանոցի տանիքից: Մոտավորապես 45 րոպե է տևել ինտենսիվ կրակը՝ գնդացիրներից, կարաբիններից, ավտոմատներից: Որից հետո մեգաֆոնով հրամայել են զենքը ցած դնել, անզեն դուրս գալ փողոց ու շարվել: Կես ժամ ժամանակ է տրվել, հակառակ դեպքում սպառնացել են հօդս ցնդեցնել զորակայանը:

Այդ պահին ես զորակայանում չէի, տանն էի: Այնտեղ են

գանվել Ռ. Վասիլյանը, մեր հատուկ ջոկատը՝ իր հրամանատարով, այն ջոկատը, որն առավոտյան Արցախ պիտի մեկներ, զորանոցում հանգստանում էին «Ադանա» ջոկատի զինվորները, հերթապահներն են եղել, մի խոսքով՝ շուրջ 150—200 հոգի: Զորակայանից պատասխանում են, որ ՀԱԲ-ը ամեն պատահական կարգադրությամբ չի զինաթափվի, որ խորհրդարանի հետ պայմանավորվածություն ունեն մեկ շաբաթ հետո ընդհանուր դիրքորոշում մշակելու, ՀԱԲ-ը ԳԽ-ի տրամադրության տակ դնելու վերաբերյալ: Այս լսելով, ևս 15 րոպեի չափ կրակում են ու հեռանում: Եթե զորակայանից անխոհեմություն թույլ տվեր պատասխան կրակ բացելու, և հրանք էլ կատարեին շտաբը պայթեցնելու իրենց սպառնալիքը, ապա Երևանի կենտրոնը կենթարկվեր մեծագույն աղետի, քանի որ, գաղտնիք չէ, ՀԱԲ-ի զորակայանում մեծ քանակությամբ պայթուցիկ զինամթերք կար:

Իսկ առավոտյան լուր է տարածվում, թե իբր պատգամավորներ են գնացել ՀԱԲ-ի հետ բանակցելու, իսկ անա հրանք կրակ են բացել և սպանել երկու հոգու՝ Գեղազնիկ Միքայելյանին՝ Զաուշին, որ մեր զինակիցն էր, սասունցի մարտիկ, և պատգամավոր Վիտյա Այվազյանին: Վիտյան իմ հարևանն էր, մենք քաղաքական հարցերում թեև տարբեր հայացքներ ունեինք, բայց դա երբեք պատճառ չէր կարող լինել անձնական հակակրանքի կամ թշնամության: Զաուշին ես անձամբ շատ լավ ճանաչում էի Կոռնիձորի կռիվներից, տեսել էի, թե ինչ քաջությամբ է կռվել, մեր ու նրա ջոկատները բազմաթիվ կռիվներում միասին են եղել, իրար օգնել են զենքով ու զինամթերքով, նեղ վիճակներից հանել: Ուզում եմ ասել, որ մերոնց ու նրա միջև թշնամության նշույլ անգամ լինել չէր կարող: Նրանց մահը շատ ցավալի էր բոլորիս համար:

Ինչ մնում է բանակցություն վարելու հորինվածքին, ապա սթափ տրամաբանության տեր ամեն մարդ կհասկանա, որ առանց նախապես զգուշացնելու, զինված ջոկատներով, զինվորական կեսին բանակցելու չեն գնում զինված պահակախմբեր ունեցող զորակայան, այն էլ՝ տարբեր կողմերից: Ես պրնդում եմ, որ բանակցության մասին նախապես որևէ խոսք չի եղել:

Ի դեպ, հենց այդ օրը խորհրդային բանակի ջոկատները

զրահամեքենաներով ու տանկերով օղակեցին մեր զորակայանը: Պարզ է, որ մեր դեմ լուրջ քայլ էր ձեռնարկվում: Այսուամենայնիվ մեր զինվորներին զգուշացրեցինք կրակոցներին չպատասխանել:

Ասեմ, որ երբ հրապարակվեց ապօրինի զինված խմբավորումները զինաթափելու վերաբերյալ Գորբաչովի հայտնի հրամանագիրը, մենք հասկացանք, որ դա ուղղված է միայն ու միայն Հայաստանի, մասնավորապես ՀԱԲ-ի դեմ: Համոզված էինք, որ դրա նպատակը հայ ժողովրդին զինաթափելն է, ադրբեջանական զինված բանդաների դեմ անզեն թողնելը:

Առավոտ կանուխ, երբ ինձ հայտնեցին գիշերվա անցուդարձի մասին, իմ առաջին միտքը եղավ զանգահարել մեր նշանավոր մտավորականներին, որ անձամբ խոսեն Լ. Տեր-Պետրոսյանի հետ, հայտնեն բանակցության սեղանի շուրջ նստելու մեր ցանկությունը, թեև, ինչպես արդեն ասել եմ, մեկ շաբաթ հետո հանդիպելու պայմանավորվածություն արդեն կար: Առաջինը զանգահարեցի Հրանտ Մաթևոսյանին: Ինչո՞ւ հատկապես նրան: Բանն այն է, որ դեռ Նոյեմբերյանի կռիվների օրերին, շուրջ տասը օր առաջ, ես նրան հանդիպել էի շրջկոմի քարտուղարի աշխատասենյակում, և որովհետև իր աչքով էր տեսել, թե մեր տղաներն ինչպես են կրվում, նա ինձ շնորհակալություն հայտնեց, իր հիացմունքն արտահայտեց, որ ֆիդայական ոգին մեր ժողովրդի մեջ արթնացել է... Ասաց. «Վարդան, արի մի ռոպեով առանձնանանք»: Մենք մի կողմ քաշվեցինք, և Հրանտը հարցրեց. «Իսկ ի՞նչ լուրջ տարաձայնություններ կան ձեր ու ՀՀՇ-ի միջև. ես շատ վատ բաներ եմ լսել ու վատ բաների եմ սպասում»: Ասացի՝ «Հրանտ ջան, ես սիրով քեզ հետ այդ մասին հանգամանորեն կխոսեի, բայց այսօր պարզապես ժամանակ չկա, միայն իմացիր, որ մենք մտադրություն չունենք առնչատման գնալու, կան որոշ ուժեր, որոնք ուզում են մեզ անպայման իրար դեմ հանել»: Հրանտը թե՝ ես կուզենայի կամուրջ դառնալ ձեր միջև: Ես նրան ասացի՝ սիրով, քեզ նման հեղինակավոր մարդը եթե հանձն է առնում՝ խնդրեմ: Դու ազգի ցավով տառապող մարդ ես, կնստենք, դու էլ կլսես ու կհամոզվես՝ հնարավո՞ր է հաշտության եզրեր գտնել մեր երկու կազմակերպությունների միջև, թե ոչ:

Պայմանավորվեցինք Երևանում հանդիպել:

Եվ ահա առաջինը զանգահարեցի Հրանտին ու ասացի՝ սրանից օրհասական պահ չի լինելու, արի խոստումդ կատարիր: Նրան շատ կարճ պատմեցի գիշերվա դեպքի մասին: Ասացի, որ նորից կզանգեմ: Կես ժամ անց Հրանտը հայտնեց, որ անձամբ խոսել է Լ. Տեր-Պետրոսյանի հետ, նա կտրուկ մերժել է բանակցել... Հետագայում ես շատերից լսեցի ՀԱԲ-ը բնաջնջելու մասին Լ. Տեր-Պետրոսյանի կտրուկ դիրքորոշման մասին:

Այդ պատասխանից հետո ես զանգահարեցի ուրիշ մտավորականների էլ. ոմանք դժկամությամբ, ոմանք էլ անզոր՝ հրաժարվեցին որևէ կոնկրետ քայլ անելուց:

Տնից դուրս եկա ու գնացի ՀԱԲ-ի զորակայան. հարկավոր էր առնակատման չգնալու հոգեբանական մթնոլորտ ստեղծել: Արդեն հրապարակվել էր ՀԱԲ-ը լուծարելու վերաբերյալ խորհրդարանի որոշումը, մարդիկ խմբերով գալիս էին զորակայան, որպեսզի խնդրելով է, թե համոզելով՝ մեզ հասկացնեին, որ խուսափենք արյունահեղությունից: Մենք բոլորին հանգստացնում էինք, որ նման բան չենք անի, քանի որ մեր երդումը եղել է հայրենիքի պաշտպանությունը, այլ ոչ թե քաղաքացիական կռիվ մղելը:

Օրն անձրևոտ էր: Ժողովուրդը դրսում կանգնած սպասում էր, որ լուծարվելու վերաբերյալ մեր որոշումը հասցնենք խորհրդարան: Հրավիրվեց Ռազմական խորհրդի նիստ: Ծայրահեղ լարված պահ էր, շատերս գիտակցում էինք, որ ՀԱԲ-ը պիտի լուծարվի: Ռազմական խորհրդում կային մարդիկ, որոնք իրենց կյանքի գնով իրենց զինվորների հետ միասին գենք ու զինամթերք էին ձեռք բերել, բազմաթիվ կռիվներ էին մղել, տուն-տեղ թողած՝ անշահախնդրորեն ծառայում էին հայրենիքին. հենց նրանք էլ չէին ուզում լուծարվել: Սակայն, ի պատիվ Ռազմական խորհրդի, այդ առաջարկը իսկույն մերժվեց: Առաջարկություն եղավ նաև բոլոր զինված ջոկատները փոխադրել Արցախ կամ սահմանամերձ գոտի: Բոլոր առաջարկներն առանձին-առանձին քննարկվեցին: Նախ ակնբախ էր, որ առնակատման դեպքում (եթե անգամ անտեսելու լինենք, որ դա մեր ծրագրին հակասում է) գործ էինք ունենալու ոչ միայն ՀՀՇ-ի զինված ջոկատների, այլև խորհրդային բա-

նակի հետ: Մենք լուր ունեինք, որ մոտակա շենքերում ռուս զինվորների զինված ջոկատներ են տեղակայված և սպասում են հարմար պահի: Մեր զորակայանն արդեն իսկ օղակված էր: Իսկ թե այն օրերին ինչ էր նշանակում Երևանի կենտրոնում կռվել խորհրդային բանակի դեմ՝ պարզ է: Կրկնվելու էր Բաքվի, Թբիլիսիի սցենարը, հազարներով խաղաղ բնակիչներ կզոհվեին, ավերածություններ կլինեին... Մենք կարժանանայինք մեր ժողովրդի պարսավանքին ու անեծքին, և նրա մտքով այլևս չէր անցնի ծնել մի նոր ազգային բանակ, ինչ երաշխիք, որ նորածինը ավելի խելահաս ու խոհեմ կլինի: Ուրեմն՝ առնակատումը բացառվում էր: Այնուհետև. ՀԱԲ-ի հսկայական ուժերը Արցախ տեղափոխելու համար պահանջվում էր մի քանի օրվա նախապատրաստական աշխատանք: Մենք համոզված էինք նաև, որ ճեղքելու փորձ անելու դեպքում մեզ անպայման կմատնեն, և խորհրդային բանակը կեռ ճանապարհին կոչնչացներ մեր ողջ զորուժը: Երրորդ առաջարկը Հայաստանի սահմանի վրա համախմբվելն էր: Արդեն կես տարուց ավել էր՝ խորհրդային զորամիավորումները տեղափոխվել էին հայկական սահման և զինաթափում էին հայ մարտիկներին, նույնիսկ գյուղացիներին, որոնք որսորդական հրացանով իրենց անասունն ու հողամասն էին պաշտպանում: Սա հայտնի փաստ է: Մենք նաև լուր ունեինք, որ մեզ զինաթափելու նպատակով Հոկտեմբերյանում կենտրոնացված է քիմիական զենքի մի տեսակ, որը կարող է երկու ժամվա ընթացքում ոչնչացնել մարդկային կուտակումները (տվյալ դեպքում՝ մեզ), առանց վնաս պատճառելու շրջակա միջավայրին: Ուրեմն կարող էին այդ զենքը մեր դեմ կիրառել, երկու ժամ հետո բոլորիս դիակները հավաքել ու այնպես ոչնչացնել, որ որևէ հետք չմնար: Այս բանը մեզ հայտնի էր: Ուրեմն՝ սահման տեղափոխվելն էլ, այդպիսով, նպատակահարմար չգտանք: Ամենախոհեմը, ամենաճիշտն այն էր, որ, համաձայն մեր հոչակագրի, ռազմական ողջ ուժը դրվի խորհրդարանի տրամադրության տակ, թող ժողովուրդն իմանա, որ այսուհետև պետությունն ինքն է պատասխանատու մեր հայրենիքի պաշտպանության համար:

Այս վերջին առաջարկն ընդունվեց բոլորիս կողմից: Ինձ հանձնարարվեց Գեղ նախագահության առաջ հանդես գալ ու

հայտարարություն անել ՀԱԲ-ի իմքնալուծարման վերաբերյալ:

Ես գնացի Գերագույն խորհուրդ, մտա Լ. Տեր-Պետրոսյանի մոտ, այնտեղ էին Վ. Մանուկյանը, Բ. Առարքցյանը, Վ. Սարգսյանը և ուրիշներ: Իմ հայտարարությունը դիմավորեցին ըմբռնումով: Վազգեն Սարգսյանը նույնիսկ ինձ գրկեց, համբուրեց, ասելով՝ «Մատաղ ունեմ անելու, որ ամեն ինչ այսպես անարյուն վերջացավ»: Խոսվեց նաև այն մասին, որ հանձնաժողով կստեղծվի պահեստները, զինամթերքը, ջոկատները հանձնելու նպատակով:

Վերադարձա զորակայան, ինձ հետ միասին եկան նաև Բ. Առարքցյանը, ՊԱԿ-ի նախագահ Բաղամյանցը, նրա հատուկ ջոկատի հրամանատար Հրաչիկ Հարությունյանն իր ջոկատով: Միասին հասանք տեղ: Մեզ հետ էին նաև պատգամավորներ Իգոր Մուրադյանը, Ազատ Արշակյանը, էլի ուրիշներ, որոնք պիտի օգնեին զենքը զորակայանից փոխադրելու: Ինչ որ հնարավոր էր՝ ձեռքով հանեցին, մեքենաներում տեղավորեցին: Երբ ամեն ինչ վերջացրինք, դուրս եկանք փողոց, Բաղամյանցն ասաց՝ պարոն Վարդան, ամեն ինչ կարգադրված է, դուք կարող եք գնալ ձեր տները:

Ես, Ռազմիկ Վասիլյանը և մեր քարտուղարուհին նստեցինք Իգոր Մուրադյանի մեքենան և պատրաստվում էինք տարածքից հեռանալ: Մեր մյուս հրամանատարները և զինվորները նույնպես առանց զենքի հեռանում էին: Այդպես էր հրամայված: Զորակայանի մոտ պահակություն անող ջոկատը ևս պիտի գար, զենքը հանձներ ու հեռանար:

Երբ հասանք «Երևան» կինոթատրոնի մոտ, ՀՀՇ-ի զինված տղաները կանգնեցրին մեր մեքենան, ասելով՝ սպասեք, մինչև հրաման ունենանք ձեզ բաց թողնելու մասին: Երկու ժամ սպասելուց հետո մոտեցավ Երևանի միլիցիայի վարչության պետ Աթարբեկյանն ու ինձ դիմելով ասաց. «Պարոն Վարդան, խնդրում եմ մեքենայից դուրս գաք, Լ. Տեր-Պետրոսյանը մի 10—15 րոպեով զրույց ունի ձեզ հետ»: Դուրս եկա, նրա հետ միասին մտանք կառավարական շենք: Նա ինձ թևանցուկ արած, մտերմաբար զրուցելով առաջնորդեց միջանցքից միջանցք, հարկից հարկ, տարավ-հասցրեց մի շքեղ, ընդարձակ դահլիճ և խնդրեց սպասել, մինչև որ հրավի-

ռեն ներս: Երբ նա դուրս եկավ, դահլիճի բոլոր դռները բացվեցին (մի քանի կողմից դռներ կային) և ներս մտան ավտոմատներով զինված մարդիկ՝ հինգ, տասը, քսան թե քանի հոգի... Մեկը մոտեցավ, պատուհանները փակեց: Ես հասկացա, թե ինչ է կատարվում: Ես որոգայթի մեջ էի և լուր չունեի, թե մյուսներն ինչ վիճակում են:

Արդեն բավական ժամանակ էր անցել, երբ եկան Լ. Տեր-Պետրոսյանը, Վ. Մանուկյանը: Նրանք ինձ առաջարկեցին հեռուստատեսությամբ հանդես գալ և ասել, այն, ինչ արդեն ասել էի Գեն նախագահության առաջ: Հոգու խորքով և արտաքին սառնասրտությամբ տեսախցիկի առաջ հայտարարեցի, որ ՀԱԲ-ը լուծարվում է, իր զինված ուժերը դնում է խորհրդարանի տրամադրության տակ, ովքեր կուզենան ծառայել հայրենիքին՝ կարող են դիմել խորհրդարանի զորամիավորումների հրամանատարությանը, իսկ ովքեր ուզում են վերադառնալ խաղաղ աշխատանքի՝ թող գնան իրենց տները: Այսքանը:

Մի ամբողջ օր մնացի այդ դահլիճում, ավտոմատավորներով շրջապատված: Նրանք խոսում էին տարբեր թեմաներով, երկուսը հատկապես շատ ագրեսիվ էին տրամադրած ՀԱԲ-ի և նրա ղեկավարների հանդեպ: Նրանցից մեկը շատ ցավում էր, որ հրամայված է եղել մեզ կենդանի բերել, թե չէ՝ ենց իր նախաձեռնությամբ ինձ հնարավորություն կտար փախչելու և հեռվից կգնդակահարեր:

Հաջորդ օրը ժամը 5-ի մոտերքը ավտոմատավորներն ինձ հանեցին դուրս. պարզվեց, որ կողքի սրահում էին Ռազմիկ Վասիլյանը, մեր հատուկ ջոկատի հրամանատար Համլետ Մկրտչյանը, Հյուսիսային զինված ուժերի հրամանատար Մայիս Միրզոևը, որը հետագայում ինձ հետ դատվեց նույն գործով: Իջեցրին ներքև, որտեղ էլի ուրիշ ձերբակալվածներ կային, շորս-շորս խցկեցին զրահամեքենաները, որոնց ոտա տանկիստների կողքին նստած էին ՀՀՇ-ի զինվորները:

Մեզ քաղաքից դուրս հանեցին, հասցրին Սովետաշենի բանտ, գցեցին քննչական մեկուսարան, որտեղ մնացինք երեք օր: Դեռ հոդված չկար, կար ընդամենը ձերբակալելու արտոնագիր: Առագորեն մի հոդված թխվեց, որով մենք, որպես բանդիտներ, պիտի հարցաքննվեինք:

Քննիչը ինձ մասնավորապես հարցնում էր, թե ինչ կառուցվածք ուներ ՀԱԲ-ը, որտեղ են տեղակայված համբարները, որքան զինված մարդ կար, ինչպիսի քաղաքական աշխատանք էինք տանում և այլն: Ես էլ ամեն ինչի պատասխանում էի անկեղծորեն, քանի որ թաքցնելու ոչինչ չկար. մենք կամավորական բանակ էինք, մեր նպատակները հրապարակներում էինք հայտնել, ի՞նչ ունեինք թաքցնելու: Ինձ ներկայացված բոլոր մեղադրանքներին պատասխանեցի, որ ինձ հանցավոր չեմ համարում: Եթե հայրենիքի պաշտպանությունը հանցագործություն է՝ պատժեք, բայց, որքան գիտեմ, մինչև օրս աշխարհում դեռ այդպիսի հոդված չի եղել, չկա:

Մի երկու օր անց պարզվեց, որ դատախազությունում բանդիտիզմի հոդվածը վիճարկվել է, քննիչները պատվիրատուին հասկացրել էին, որ այդ հոդվածը իմ դեմ չի գործի, և մոգոնվեցին երեք նոր հոդվածներ՝ 222-րդ հոդվածի երրորդ մասը՝ առանձնապես շարամիտ խուլիգանության համար (վկայակոչվում էր օգոստոսի 25-ին Գեորգույն խորհրդի վրա զինված «հարձակումը»), 232-րդ հոդվածը, որով մեղադրվում էի ապօրինի զենք կրելու համար, թեև ինձ մոտ զենք չկար, զինվորական պայուսակիս մեջ գտել էին ՀԱԲ-ի՝ զենք կրելու վկայականը, որով ինձ տրված էր «Կալաշնիկով» մակնիշի ավտոմատ և «Մակարով» մակնիշի ատրճանակ:

Երրորդ՝ 206-րդ հոդվածի երրորդ մասով մեղադրվում էի զենքի ուժով հասարակական կարգը խանգարելու համար: Հետ դառնալով պատմեմ, թե դրա տակ ինչ էր նկատի առնվում: 1990 թվականի մայիսի 4-ին ՀՀԿ-ի և քաղաքական այլ կազմակերպությունների ղեկավարներ հավաքվել էին՝ առաջիկա ընտրությունները հետաձգելու նպատակով: Նրանք ՀԱԲ-ից հրավիրեցին ինձ: Ընտրությունները գոնե վեց ամսով հետաձգելու դեպքում հնարավորություն կտրվեր քաղաքական մյուս կուսակցություններին իրենց թեկնածուներին առաջադրելու, քարոզչական աշխատանք կատարելու, այլապես ասպարեզում միայն կոմկուսն ու ՀՀՇ-ն էին, որոնք հեռուստատեսությունը, մամուլը, լրատվության մյուս բոլոր միջոցները օգտագործում էին իրենց թեկնածուներին պրոպագանդելու համար: Եվ որպեսզի Հայաստանի կոմկուսի առաջին քար-

տուղար Վլ. Մովսիսյանի ուշադրությունը գրավեին, այդ ընկերները որոշել էին մի «անմեղ» քայլի դիմել, այսպես ասած՝ պատանդ վերցնել Երևանի քաղկոմի շենքը:

Այս որոշումը հեռախոսով հայտնվեց քաղկոմի երկրորդ քարտուղար Վլ. Աղայանին: Նա մեզ հրավիրեց իր մոտ և այդ մասին հեռախոսով հայտնեց կոմկուսի Կենտկոմի քարտուղարին: Եվ որպեսզի ավելորդ աղմուկ չլիներ, նա ներքին կարգով կարգադրեց աշխատողներին շենքից հեռանալ: Սա էր ամբողջը:

Ես ինձ հարցաքննող քննիչին (ազգանունը Շահվերդյան էր), այնուհետև նաև դատարանում ասացի, որ եթե չորս ժամով կոմունիստներին աշխատելու հնարավորությունից զրկելու համար պատիժ եք սահմանում, ապա այդ դեպքում ինչ պատիժ է հասնում ամբողջ ՀՀՇ-ին, որը գլխավորեց բազմաթիվ ցույցեր, հանրահավաքներ, օրերով, շաբաթներով, ամիսներով խափանեց ոչ միայն Երևանի, այլև հանրապետության մյուս քաղաքների ու շրջանների կյանքը, տրանսպորտի աշխատանքը, կենտկոմի, քաղկոմների ու շրջկոմների գործունեությունը, համազգային գործադուլ կազմակերպեց, երկու անգամ շրջափակեց «Զվարթնոց» օդանավակայանը, փակեց արդյունաբերական խոշոր ձեռնարկությունները, հետագայում նաև՝ «Նաիրիտն» ու ատոմակայանը, միլիարդների վնաս հասցնելով ողջ հանրապետությանը...

Դառնալով հարցաքննության ընթացքին, համոզված ասում եմ, որ ո՛չ քննիչը, ո՛չ դատավորն ու դատախազը, ո՛չ էլ ժողովրդական ատենակալները ամենևին չէին էլ կասկածել, թե ես խուլիգան եմ կամ ապօրինի է եղել իմ գործունեությունը: Նրանք շատ բարյացակամ էին իմ հանդեպ, ինձ քրեական հանցագործի տեղ չէին դնում ամենևին: Սակայն...

Հարցաքննությունն սկսվեց սեպտեմբերի 3-ից և ընդմիջումներով շարունակվեց մինչև նոյեմբերի վերջը, ընդ որում՝ հոդվածներից մեկը դրվեց վերջին պահին և ահա թե ինչու. պատգամավորության թեկնածու առաջադրվելու կապակցությամբ Ռ. Վասիլյանին թույլ էին տվել, խափանման ձևը փոխելով, ազատել իր տանը և զբաղվել ընտրարշավով: Այդ ընթացքում նա հարցազրույց ունեցավ կարծեմ «Եղիցի լույս» թերթի աշխատակցի հետ և փորձեց մեր նկատմամբ արված

մի քանի փակագծերը բացել: Մեզ նորից տարան հարցաքննության և ինձ վրա բարդվեց նշված հոդվածի երրորդ մասը: Իմ դեմ միտումնավոր ցուցմունքներ տվեցին մարդիկ, որոնց երեսը տեսած չկայի, ավելի ճիշտ՝ միայն մեկին էի հիշում՝ այն ավտոմատավորին, որը Գեհ նիստերի շենքում օգոստոսի 25-ին ուզում էր կրակել ինձ վրա:

Ինչևէ, այդ շորսի ցուցմունքներից հետո հասկացա, որ իմ դեմ իսկապես ուզում են գործ սարքել. մինչ այդ վստահ էի, որ քննիչն իմ ցուցմունքներից համոզվել էր, թե ես ոչ հանցագործ, ոչ էլ որևէ մեղքի տեր եմ: Եվ երբ տարակուսանքս հայտնեցի, նա ուսերը թոթվեց ու մեղավորի նման ասաց. «Ինչ է, չգիտե՞ք, որ կարգադրություն կա»:

Ինձ տարան «քիմ» խուցը, ուր, ի դեպ, 12 հոգով էինք: Աշխարհում, թերևս, այդպիսի անմարդկային բանտախուց չգտնվի, և ամեն մարդ ինչ-որ ձևով պիտի տեսնի, անցնի այդ կյանքի միջով, դա շատ ուսանելի է... Ես մտածում էի՝ եթե հիմա, երբ դեմոկրատիայի ինչ-որ շորշոփներ են զգացվում, մարդկանց պահում են այսպիսի պայմաններում, ապա ինչ պայմաններում են իրենց դժնի օրերն անցկացրել 37 թվականի հարյուր հազարավոր անմեղ զոհերը: Ուզում եմ նշել նաև, որ կալանավորները եզակի մի դեպք անգամ չէին հիշում, երբ որևէ դատավոր, դատախազ մտած լիներ այդ կալանավայրերը, իր աչքով տեսած լիներ այդ ամենը: Մտներ՝ նախքան իր դատավճռի արձակումը: Մենք ունենք բազմաթիվ իրավագետներ, որոնք այդ աշխարհի հետ անձնական որևէ շփում չեն ունեցել. մինչդեռ հարկ էր գոնե ուսման տարիներին, գոնե մեկ անգամ սեփական աչքով տեսնել այդ ամենը: Պատկերացրեք մի գրողի, որը, առանց կյանքի հետ որևէ ծանոթության, նստի ու գիրք գրի իր չիմացած բաների մասին... Դեռ բանտում գտնվելու ժամանակ մտածում էի հոդված գրել, թե ինչպես են խորտակվում հոգիները, ինչպես են պատահականորեն հանցագործ դարձած տասնյակ հարյուրավոր մարդիկ բանտում դառնում պրոֆեսիոնալ հանցագործներ, ինչպես է մարդը իր ֆիզիկական գոյությունը պահպանելու համար հազարումի անմարդկային, ստոր ձևերով տրորում իր արժանապատվությունը, կորցնում ինքնասիրությունն ու պատիվը:

... Մեղադրանքները ներկայացվում էին ոչ թե ամբողջ ՀԱԲ-ին, այլ առանձին մարդկանց, 3—4 հոգու: Այդպես մասնատել էին, որպեսզի հեշտ լինեն հաշվեհարդար տեսնելը և մեծ աղմուկ չառաջանար դրսում: Եթե ամբողջ ՀԱԲ-ը դատվեր՝ դա ուրիշ արձագանք կունենար, իսկ երբ առանձին անհատներ են մեղադրվում «սեփական» արարքների համար՝ տպավորությունը միանգամայն այլ է: Սա կանխավ մտածված էր:

Ասեմ, սակայն, որ ժամանակ առ ժամանակ տարբեր ուղիներով մեր ականջին էին հասցնում, թե՝ մեզ պարզապես ժամանակավոր մեկուսացրել են, մինչև որ հանրապետությունում քաղաքական վիճակը կայունանա, Մոսկվան համոզվի, որ ՀԱԲ-ը զինաթափված է, նրա պարագլուխները մեկուսացված են... և որոշ ժամանակ անց մեզ առանց դատի ազատ են արձակելու: Բայց ամիսներն անցնում էին, գործը տեղից չէր շարժվում: Եվ ահա 1991 թ. հունվարին, հինգ ամիս նստելուց հետո, որոշեցինք դիմում գրել Հայաստանի գլխավոր դատախազին ու հայտնել մեր բողոքը, որ մեզ ձերբակալել են ապօրինի, մենք հանցագործ չենք և պահանջում ենք ազատ արձակել: Մենք նաև պատրաստակամություն էինք հայտնում ծառայել ստեղծված երկրապահ ջոկատներում, այն բոլոր կառույցներում, որտեղ մեր կարիքը կզգացվի, այլապես ստիպված կլինենք դիմել ծայրահեղ միջոցի: Այս արտահայտության միտքը չէինք պարզել. թող մեկը մտածեր, թե մեզ կկախենք, մյուսը՝ ինչ որ կամենա: Մեր նամակն ընթերցողները եզրակացնում են, որ մեր այդ արտահայտության տակ թաքնված է ՀԱԲ-ի դեռևս չլուծարված ուժերի միջոցով Հայաստանում ապստամբություն կազմակերպելու սպառնալիք: Եվ ահա ինձ, Ռազմիկ Վասիլյանին և մեր հատուկ ջոկատի հրամանատար Համլետ Մկրտչյանին կանչում են բանտապետի մոտ. նման դեպքերում, սովորաբար, միջոց է տրվում մարդավարի հագնվելու, իսկ այդ անգամ թույլ չտվեցին անգամ կոշիկներս, զինվորական հագուստներս հագնել: Կիսատպռատ հագնված գնացի բանտապետի մոտ, չիմանալով, որ Ռ. Վասիլյանն ու Հ. Մկրտչյանն արդեն այնտեղ են: Մեզ ներկայացավ մի մարդ ու ասաց, որ դատախազության ներկայացուցիչն է, հայտնեց, որ մեր նամակը տեղ է հասել, և հան-

ռապետության դատախազ Ա. Գեորգյանն ուզում է դիմումի կապակցությամբ մի կես ժամվա զրույց ունենալ մեզ հետ:

Մենք ասացինք՝ դեմ չենք, բարձրանանք վերև, մարդավարի հագնվենք ու գանք, նա թե՝ կարիք չկա, այդպես էլ վատ չէ, մի կես ժամից հետ եք գալու:

Մենք դուրս եկանք, ինձ ու Համլետին նստեցրին մի «Վիլիս», Ռազմիկին՝ մեկ այլ, ավտոմատավորները քիպ նստեցին մեր երկու կողմերում և ուղեկցող ավտոմեքենաներով բերեցին Երևան: Ճանապարհից հասկացա, որ մեզ տանում են ոչ թե դատախազություն, այլ, ամենայն հավանականությամբ, ՊԱԿ-ի մեկուսարան: Այդպես էլ եղավ: Մեզ առանձին-առանձին իջեցրին ՊԱԿ-ի բակում, մտցրին խցիկը, ու ես ընկերներիս այլևս չտեսա: Սկզբում ինձ տարան, հետո՝ նրանց: Խցիկում ոտքից-գլուխ ստուգեցին և համոզվելով, որ կասկածելի ոչինչ չկա ինձ մոտ, մի ժամից հետո տարան բանտախուց, ուր մի կալանավոր կար: «Հայ դատի» ջոկատից էր, մասնակցել էր բոլոր կռիվներին, համագործակցելով ՀԱԲ-ի հրամանատարների ու զինվորների հետ:

... ՊԱԿ-ի բանտախցում մնացի 91 թ. հունվարի 30-ից մինչև ապրիլի 26-ը: Բերդապետն իր առանձնասենյակում մի կարճ զրույց ունեցավ ինձ հետ, մեծ հարգանքով ինձ վերաբերվելով, ասաց՝ նկատի ունեցեք, որ մենք այստեղ հյուրանոցի դեր ենք կատարում, ձեր նկատմամբ կլինի բարյացակամություն, բանտի կանոնադրությունը կարդացեք, որ ավելորդ որևէ բայլ չանեք, իմանաք ինչ կարելի է, ինչ չի կարելի, և այլն: Իմացա, որ ամսական տասը ռուբլու մթերք կարող եմ ձեռք բերել մեկուսարանի խանութից: Խանութի երեսը չէի տեսնում, ասում էին՝ ինչ կա, ու ես պատվիրում էի: Իսկ եղածը շատ էր, կարագ, հաց, թխվածք ու ծխախոտ: Կարող եմ ասել, որ ՊԱԿ-ի մեկուսարանում ավելի շատ կարագ ու շատ եմ կերել, քան անցած ամբողջ կյանքումս: Այդտեղ հաշերը բավական որակով էին, որովհետև իրենք՝ ծառայողներն էին եփում, որպեսզի ավելորդ մարդիկ շփում չունենային կալանավորների հետ: Անկողինը մաքուր էր, շաբաթական մի անգամ փոխում էին, շաբաթը մի անգամ բաղնիք էին տանում: Հեռուստացույց, ռադիո չկար, արտաքին աշխարհի հետ

կապողը միայն թերթերն էին, հիմնականում կենտրոնական, հետագայում նաև հանրապետական թերթեր էին տալիս:

Որոշ ժամանակ անց բերդապետին ուղղված բողոքի նամակ գրեցի, որ անա 6—7 ամիս է՝ նախնական կալանքի մեջ եմ, չգիտեմ՝ մեղքս ինչ է և պահանջում եմ մեղադրականը ներկայացնել: Մի շաբաթ չանցած՝ մեղադրականը ներկայացրին. ես մեղադրվում էի քրեական օրենսգրքի երեք հոդվածներով, նշված էր նաև, որ ես ինձ մեղավոր չեմ համարում:

Մեղադրականի առիթով պարոն Սադոյանի հետ զրուցելու ժամանակ (նա հիմա թոշակի է անցել, և ես կարող եմ նրա խոսքերը մեջբերել) ասաց՝ «Պարոն Վարդան, մենք գիտենք, թե դուք ինչ եք արել և ինչի համար եք նստած, մի բան որոշակի է՝ կամ դուք պիտի լինեիք այստեղ, կամ ձեզ նստեցնողները: Այնպես որ՝ մենք ոչ մի մեղք չունենք: Դուք հարգված մարդ եք մեր կողմից, ես լրիվ ծանոթ եմ ձեր մեղադրականին, հորինովի բան է՝ սրտին մոտ մի ընդունեք, մի ընկրկվեք» և այլն: Ասացի՝ որ ընկճվող մարդ լինեի, այս տարիքում զենք չէի առնի ձեռքս, կշարունակեի զբաղվել արվեստով, իմ հինգ թոռներով...

Իմ մեղադրականի մեջ հանցակազմ գոյություն չուներ. այդպես կարելի էր մեղադրել շարժմանը մասնակցած ցանկացած մեկին: Ինձ համար մի ավելորդ անգամ պարզ դարձավ, որ այդ ամենը քաղաքական հաշվեհարդար է մի մարդու հանդեպ, որը չի ընդունում ՀՀՇ-ի գաղափարախոսությունը, նրա պայքարի ձևերն ու տակտիկան: Եվ անա ինձ ու ՀԱԲ-ի մյուս ղեկավարների հետ հաշվեհարդար է տեսնվում, որ մեկուսացվի նաև բանակը, որն արդեն հոչակ էր վայելում Հայաստանում ու նրա սահմաններից դուրս: Միաժամանակ ազգին տրամադրում էր ՀԱԲ-ի գաղափարախոսության, այսինքն՝ ինքնապաշտպանության նպատակով ուժեղ կառույցներ ստեղծելու դեմ: Մինչդեռ ինչքան էլ ՀԱԲ-ը սխալներ ունենար,— իսկ ես այն մարդը չեմ, որ ինձ կամ այն, ինչ որ մենք ստեղծել էինք, անսխալական համարեմ,— նոր ստեղծված իշխանությունը, եթե այն իսկապես շարժման ծնունդն էր, իր զավակին չպետք է լափեր, այլ պիտի սրտացավությամբ զբաղվեր նրա արմատական վերակառուցման խնդիրներով: ՀԱԲ-ը քաղաքական որևէ նկրտում չուներ քառիս

բուն իմաստով. դա արտահայտվեց նրանով, որ մենք ոչ միայն քաղաքական որևէ գործողություն չկատարեցինք թե կոմունիստների, թե ՀՀՇ-ի դեմ, այլև այն բանում, որ նույնիսկ պատգամավորական թեկնածուներ չառաջադրեցինք: ՀԱԲ-ի համակիր մարդիկ շատ են մեղադրել մեզ այն բանի համար, որ մենք ընտրությունների նախօրյակին այնքան հեղինակություն ունեինք, որ կարող էինք տասը թեկնածու առաջադրել և խորհրդարանում բավական տեղեր ունենալ, ինչը որ չարեցինք: Այդպես անելու դեպքում, իբր, թույլ չէինք տա, որ ՀԱԲ-ը լուծարվի, ընդհակառակը, կվերակառուցվեր ու կդառնար իսկական ազգային բանակ: Ես պիտի սառը ջուր լցնեմ այդպես մտածողների վրա, որովհետև այն ժամանակ էլ, հիմա էլ՝, գտնում եմ, որ ՀԱԲ-ը, ինչպես Համլետը կասեր, եթե անգամ արևի պես անբիծ լիներ ու ձյան պես մաքուր, միևնույն է, նրա վրա բծեր կգտնեին: Ամեն ինչ արվելու էր, որպեսզի ՀԱԲ-ը վարկաբեկվի ու լուծարվի: Հիշեցնեմ Սիմոն Վրացյանին գրած Ավետիք Իսահակյանի նամակը, որտեղ բանաստեղծը ռուս-թուրք-հրեա եռանկյունին դիտում էր որպես հայ ժողովրդի բնաջնջմանը հետամուտ մի ալյանս... որը, իմ կարծիքով, գործում է և այսօր:

Խորհրդային պետության մեջ առաջինը, որ հանդգնեց ազգային բանակ ստեղծել, հայ ժողովուրդն էր, որովհետև իր դարավոր եղերական փորձից հանգել էր այն եզրակացության, որ իր նույսը ինքն է, իր ինքնապաշտպանությունն է: Այսօր արդեն չկա մի ժողովուրդ, որն ինքնաբերաբար անկախություն ստանալով՝ չմտածի իր ազգային բանակն ունենալու մասին: Իսկ մենք արդեն չորս տարի ուշացել ենք, ինչ որ ստեղծված էր՝ ոչնչացվեց, ինչ որ արտադրվում էր՝ այլևս դադարեց, գիտակցաբար թե թողտվության պայմաններում կողոպտվեցին գործարանների էլեկտրոնային հազվագյուտ սարքավորումները, ձախողվեցին բոլոր այն նախաձեռնությունները, որոնք ուղղված էին ինքնապաշտպանության նպատակին...

Այժմ անդրադառնանք ձեզ հետաքրքրող մեկ այլ խնդրի՝ իմ և ՀԱԲ-ի գլխավոր հրամանատար Ռազմիկ Վասիլյանի փոխհարաբերություններին:

Արդեն ասել եմ, թե ինչպես ընդգրկվեցի Վասիլյանի սաղմնավորած խմբում, և 89 թ. օգոստոսի 4-ին հրաժարվեցինք

ՀԱԲ-ի ծնունդը: Դրանից հետո մեր բոլոր ջանքերը եղել են համատեղ. եթե Վասիլյանն անձամբ զբաղվում էր զենք, զինամթերք հայթայթելու, ջոկատներ կազմավորելու խնդիրներով, ապա ես հիմնականում զբաղվում էի քաղաքական աշխատանքով, քանի որ մարդիկ ոչ միայն պիտի սովորեին զենք բռնեցնել, այլև պիտի գաղափարապես զինված լինեին, իմանային, թե հանուն ինչի են կռվում. աշխատում էի ամեն զինվորի ու հրամանատարի կողմնորոշել ստեղծված քաղաքական իրադրության մեջ: Իմ նպատակների մեջ էր մտնում խորհրդային բանակում ծառայող կադրային սպաներին ՀԱԲ-ի շարքերը ներգրավելը. մեզ հաջողվեց 80-ից ավելի սպա, լեյտենանտից մինչև գնդապետ, և երկու գեներալ ունենալ մեր զորակայանում, և քաղաքական պայմանների թելադրանքով ստրատեգիական հարց մշակելիս անգնահատելի էին լինում նրանց փորձը, գիտելիքները: Այդ մարդկանց մի մասն այսօր էլ ընդգրկված է Հայաստանի ռազմական կառույցներում:

Ես Ռազմիկ Վասիլյանին բնութագրել եմ դեռևս Սովետաշենի բանտում. այնտեղ լրացավ նրա ծննդյան 31-ամյակը, և ես, օգտվելով կալանավայրում համակներ գրելու բնորոշ ձևից, ծխախոտի թղթի վրա գնահատեցի նրա ծառայությունը մեր ազգային-ազատագրական պայքարի մեջ, բնութագրեցի նրան որպես հրամանատարի, նախաձեռնողի, հիմնադրի: Այդ բնութագիրն իր մոտ է:

Ռազմիկ Վասիլյանը խորհրդային Միության պատմության մեջ առաջինը ստեղծեց ազգային բանակ. սա անառարկելի փաստ է: Թե ինչ կառուցվածք պիտի ունենա ՀԱԲ-ը, ինչպիսին պիտի լինեն ջոկատները, ինչպիսի ճամբարներ պիտի լինեն սահմանամերձ շրջաններում,— այս բոլորը նրա մտքի արգասիքն են: Նա խորհրդակցում էր հրամկազմի հետ, և նրա առաջարկներն ավելի կատարյալ էին դառնում, բայց ամեն ինչում նրա եռանդն էր, միտքն էր, նախաձեռնությունը: Ես ականատես եմ եղել կռիվներին նրա մասնակցությանը, խիզախ ու հանդուգն է, թեև զինվորական կրթություն չունի: Նա պիտի դառնար ֆինանսիստ, սովորում էր Մոսկվայի ֆինանսների ինստիտուտում, բայց պայքարն սկսվեց, և նա հնարավորություն չունեցավ այլևս շարունակելու ուսումը: Ռազմական գործում բնատուր շնորհք ունի. նրա արմատները

գալիս են Մուշից, մեջը կրում է մշեցիներին բնորոշ ռազմատենչության գենը: Զնայած խոշորամարմին չէ, բայց կորովի է, շընկճվող: Մեր բոլոր հրամանատարներին մոտիկից ճանաչելով՝ միշտ ինքս ինձ հարց էի տալիս՝ եթե Վասիլյանը չլիներ, ապա ո՞վ կարող էր փոխարինել նրան և դժվարանում էի ուրիշ մեկին տեսնել ՀԱԲ-ի հրամանատար: Երբ նրան Կրասնոդարում ձերբակալեցին, մեր ռազմական խորհուրդը որոշեց գլխավոր հրամանատար չընտրել և սպասել նրա վերադարձին: Բայց քանի որ գործն անգլուխ մնալ չէր կարող, որոշվեց ինձ ընտրել ռազմական խորհրդի նախագահ, և ես մինչև Վասիլյանի վերադարձը գլխավորեցի ՀԱԲ-ը: Նրա բացակայության ընթացքում տեղի ունեցավ Նոյեմբերյանի առաջին կռիվը, որը Երասխից հետո երկրորդ կարևոր մարտն էր և վճռորոշ այն իմաստով, որ եթե Երասխում իրար դեմ կանգնած էին մեծ տեխնիկա և մարդկային աճռելի ուժ, երկու կողմում էլ խորհրդային բանակի զորամասեր կային, թեև չէին միջամտում կռվին, ապա Նոյեմբերյանում ադրբեջանական կողմը, որ սանձազերծել էր այդ ընդհարումը և շատ վստահ էր հաջողության մեջ, և մենք մենակ էինք, դեմ-դիմաց: Այդ կռվում իրեն փայլուն դրսևորեց Զաուշի ջոկատը: Այդ կռվում մկրտվեց մեր աղջիկների «Դարս» ջոկատը: Այդ կռվից հետո էր, որ տխրահռչակ Անարը, որ ֆրանսիական «Ֆիգարո» թերթում հայերին մազոխիստ էր որակել, վազեց Գորբաչովի մոտ, թե՝ փրկիր մեզ հայերից, թե չէ նրանք մեզ կլցնեն Կասպից ծովը... Հնարավորություն չունենալով երկար կանգ առնելու այդ կռվի մանրամասների վրա, ասեմ միայն, որ եթե ռուսները չմիջամտեին, մենք արժանի դաս տված կլինեինք ադրբեջանցիներին, և այսօր էլ փակ չէր լինի Իշևան—Նոյեմբերյան մայրուղին:

Իմ ու Վասիլյանի միջև եղել են նաև տարակարծություններ: Նոյեմբերյանի առաջին կռվից հետո, թեև ռուսական ջոկատներն արդեն նստած էին ադրբեջանական Բաղանիս ու Ոսկեպար գյուղերում, և մենք գիտեինք նրանց թվաքանակն էլ, տրամադրություններն էլ, նպաստավոր պայմաններ կային այդ գյուղերը վնասազերծելու: Ադրբեջանցիները թույլ չէին տալիս (և դա շարունակվում է մինչև օրս) հայկական գյուղերի բնակչությանը խաղաղ ապրելու և աշխատելու: Ես

Վրեժը՝ «Վրիժառուների» և Մայիսը արդեն ստրատեգիական նպատակով ուսումնասիրել էինք տեղանքը: Ռազմական խորհրդում ես զեկուցեցի: Բայց ասեմ, որ նախքան ֆենարկումը, կալանքից պայմանական ազատվել էր Ռազմիկ Վասիլյանը, և իմ զեկուցումը խորհրդում լսվեց նրա մասնակցությամբ: Խորհուրդը հավանություն տվեց ծրագրին, բայց Վասիլյանը կտրականապես դեմ արտահայտվեց, գտնելով, որ առաջնահերթը Արցախի ճանապարհի բացումն է Քյալբաջարից: Որքան էլ փորձեցի հիմնավորել իմ փաստարկները, միևնույն է, նա մնաց անդրդվելի, նրա տեսակետը հաղթեց: Սակայն ոչ այդ, ոչ մյուս տարակարծությունները երբեք չեն ազդել մեր փոխհարաբերությունների վրա: Ես միշտ հիմա էլ գտնում եմ, որ մենք նակատագրական տխալ թույլ տվեցինք. եթե իմ տեսակետը հաղթեր՝ այսօր մեր հյուսիսային շրջանները շատ ավելի բարվոք ու ապահով վիճակում կլինեին:

Մեր շրջապատի մարդիկ գիտեին, որ մենք կես բառից իրար հասկանում ենք. ըստ երևույթին, իմ ու նրա մեջ մի ընդհանուր բան կար, թեև ես իմ արմատներով խոյեցի եմ, նա՝ մշեցի, բայց, ի վերջո, երկուսս էլ նույն հող ու ջրի մարդիկ ենք՝ նա ծնվել է Կոտայքի շրջանի Զառ, ես՝ Զառից մի քանի կիլոմետր հեռավորության վրա գտնվող Շահաբ գյուղում: Նրա բնավորության, գործողությունների մեջ եղել են, ինարկե, բաներ, որ ինձ դուր չեն եկել. դա շատ բնական է, նա երիտասարդ է, ավելի բուռն, այնտեղ, որտեղ ես սառնասիրտ դատել եմ, նա պոռթկացել է: Բայց երբեք մտքովս չի անցել նրա մեջ ինչ-որ թերություն շեշտել ու դա դարձնել հակադրվելու առիթ: Ընդհակառակը, մտածել եմ, որ համատեղ գործում ինձ ավելի լավ ճանաչելով՝ նա իր թերություններն ավելի հեշտ կշտկի, քան եթե հակադրվենք միմյանց:

Ուզում եմ ասել նաև, որ մեր պատմության այս փուլում հայ ժողովուրդը նրան էլ, մյուսներին էլ ծնել է, որ զենք վերցնեն ու պաշտպանեն մեր հողը, մեր պատիվը: Երբ ինձ հանդիմանում են, թե ՀԱԲ-ի մեջ հանցագործ տարրերը շատ էին և մտավորականներ չկային, ես նրանց պատասխանում եմ. դա հանցանք չի, մենք հնարավորություն չենք ունեցել ընտրության, ազգը ինչ տվել է՝ նրան էլ տեր ենք կանգնել: Իսկ

մտավորականներ եղել են, որ, հայտնվելով դժվարին պայմաններում, ռեալ վտանգի դեմ-հանդիման, չեն կարողացել երկար մնալ ու քաշվել են թիկունք: Այո, մեր շարքերում եղել են նաև հանցագործ տարրեր, բայց ճիշտ չէ նրանց մատի փաթաթան դարձնելը ու դրանով իսկ ՀԱԲ-ը վարկաբեկելու միտումը: Նորից եմ ասում, ՀԱԲ-ը կամավորական բանակ էր, իսկ կամավորական բանակի կարգապահությունը չի կարելի համեմատել կանոնավոր բանակի կարգապահության հետ: Վերջերս կարդում էի Ավետիս Ահարոնյանի գիրքը Անդրանիկի մասին, որտեղ հեղինակը բացատրում է, թե ինչու Զորավարը հեռացավ պետական բանակային կազմավորումներից. հիրավի, ժողովրդական հերոսը, իսկական մեծ ֆիդայինը չէր կարող «տեղավորվել» կանոնակարգված բանակի կառուցվածքի մեջ: Սա համոզիչ փաստարկ է: Մենք չէինք կարող կիրառել բոլոր այն պատժամիջոցները, որ ընդունված են կանոնավոր բանակում, մենք ավելի շատ աշխատում էինք բարոյական-դաստիարակչական միջոցներով ազդել հանցագործության հակված կամավորականների վրա. երբեմն հաջողվում էր, երբեմն՝ ոչ:

Տարիքային առումով էլ ՀԱԲ-ը խայտաբղետ էր. նրա շարքերում կային 18-ից մինչև 70 տարեկան մարդիկ, որոնք անխրտիր ապացուցեցին կռվելու իրենց ընդունակությունը: Կային 70 տարեկան ուսուցիչներ, որ մեր լավագույն զինվորներն էին՝ ակտիվ, գործունյա, անվախ: Երիտասարդները նրանցից օրինակ էին վերցնում:

Ռազմական իմաստով ինչպիսի՞ կառուցվածք ուներ ՀԱԲ-ը:

Նախ ասեմ, որ Ռ. Վասիլյանի բացակայության ժամանակ ես ակտիվ քաղաքական աշխատանք տարա, որ հանրապետության բնակչության ամբողջ մարտունակ մասը ստանա ռազմական պատրաստվածություն: Ծրագրեցի ստեղծել նաև հրամանատարություններ, ասենք՝ Արարատյան, Սևանի ավազանի, Հյուսիս-արևմտյան, թիկունքի հրամանատարություն, որ զբաղվում էր զուտ թիկունքը կազմակերպելու խնդիրներով: Նախատեսված էր Թուրքիայի և Հայաստանի սահմանագծում ստեղծել նաև սահմանապահ զորամիավորումների հրամանատարություն: Մենք ընդհուպ մոտեցել էինք այդ խնդրի լուծմանը, որովհետև թե այն ժամանակ, թե հիմա այն

կարծիքին եմ, որ մի գեղեցիկ օր Խորհրդային սահմանապահ զորքերը կարող են սահմանից բառիս բուն իմաստով գոլորշիաճալ (դա դժվար չի ներկայիս տեխնիկայի պայմաններում) և սահմանը բաց թողնել թուրքերի առաջ: Կումայրիում ծառայող ռուս սպաներից մեկը մեր մի սպայի հետ մտերմիկ զրույցի ժամանակ (հարբած է եղել) ասել էր, թե այդպիսի բան բացառված չէ, մի օր կարող ենք սահմանները բացել և ասել՝ թուրքեր, դուք ինչ-որ բա՞ն էիք ուզում հայերին ասել, խնդրեմ, եկեք, ասեք... Պատահական չէր, որ նախագահի թեկնածու Ժիրինովսկին էլ նման մի միտք արտահայտեց: Ես, իհարկե, այնքան միամիտ չեմ կարծելու, թե մենք այնպիսի պաշտպանություն կստեղծեինք, որը կհակակշռեր թուրքական հզոր ուժերին, բայց մի՛ բան է լիովին անպաշտպան մնալը, մի ա՛յլ բան՝ թեկուզ թույլ պաշտպանությունը, որը հնարավորություն կտար որոշ ժամանակ շահել ու անհրաժեշտ քայլերի դիմել:

Բոլոր այն շրջաններում, որտեղ ստեղծվում էին ՀԱԲ-ի շտաբներ ու ճամբարներ, կային նախ և առաջ ջոկատներ: Սևանի ավազանում, օրինակ, ունեինք մոտ 30 ջոկատ. դրանցից յուրաքանչյուրը 15 օրը մեկ իր պարապմունքներն էր անցկացնում, զբաղվում էր զինավարժությամբ, դիրքավորվելու հմտություն էր ձեռք բերում: Այս գործում մեր սպաների հետ մեկտեղ օգնում էին տեղացի նախկին զինվորականները, դպրոցների ռազմագիտության ուսուցիչները, ԴՕՍԱԱՖ-ի աշխատողները: Մենք գնում, ֆենություն էինք ընդունում, և տղաներին տրվում էր համապատասխան վկայական: Երբ ասում ենք՝ ՀԱԲ-ի կազմում 160 հազար կամավորական կար, ապա խոսքը ցուցակագրվածների մասին է, դրանց փոքր մասն էր միայն զինված: ՀԱԲ-ը դեռ ձևավորման մեջ էր: Վստահաբար կարող եմ ասել, որ հանձինս ՀԱԲ-ի և մյուս զինված ջոկատների,— նկատի ունեմ հատկապես «Անկախության բանակ», «Սասունցի Դավիթ», «Մեծն Տիգրան», «Արաբո» ջոկատները, «Ապավեն» զունդը և բոլոր մյուս կազմավորումները, որոնք կռիվների ընթացքում դրսևորեցին բարձր մարտունակություն ու անզիջում կամք,— մենք ունեինք լուրջ, հայրենիքին բոլորանվեր ծա-

ռայելու պատրաստ զինուժ, որը, կրկնում եմ, կարող էր դառնալ ազգային հզոր բանակի միջուկը:

Ինչպէ՞ս: Մարտի 16-ին նշանակվեց իմ դատը, որը ընդհատումներով տևեց մի ամիս: Դատավարությունը փակ չէր, բայց բաց էլ չէր. դահլիճում իրենց որոշակի տեղերում նստած էին ՊԱԿ-ի աշխատողներ, իհարկե, ծպտված, միլիցիայի աշխատողներ՝ չծպտված, ՀՀՇ-ականներ: Հարազատներից ներկա էին կինս, որ հասարակական պաշտպան էր ձևակերպվել, թեև ունեի նաև պաշտոնական դատապաշտպան, քույրերս ու աղջիկներս, շատ քիչ թվով ՀԱԲ-ի զինվորներ, շարժման ակտիվիստներ, զանազան կազմակերպությունների ներկայացուցիչներ, լրագրողներից մի աղջիկ կար, որին չեմ ճանաչում, հեռուստատեսությունից մեկը մի կարճ դրվագ նկարեց՝ առանց ինձ հետ որևէ խոսք փոխանակելու, որպեսզի լրատվության մեջ հաղորդվեր: Դատավորի, դատախազի ու ատենակալների վարմունքից զգում էի, որ բարյացակամ են, ըստ պաշտոնի հարցեր էին տալիս ու չէին հակաճառում իմ պատասխաններին: Զգում էի դահլիճի համակրական վերաբերմունքը: Իմ վերջին խոսքում, ամբողջ իրադարձությունները վերլուծելով, ոչ միայն մեղավոր չէի ճանաչում ինձ ու ՀԱԲ-ի մյուս ղեկավարներին, այլև ասացի, որ մեզպեսները Ադրբեջանում ազգային հերոսի համարում ունեն, վայելում են իշխանության, ժողովրդի աջակցությունը, ապրում են լիության մեջ, իսկ մենք, ահա, շնորհակալության արժանանալու փոխարեն դատվում ենք որպես հանցագործներ: Ասացի նաև, որ ժողովդի համար նակատագրական, բախտորոշ պահին միակամ, միասնական դառնալու փոխարեն ջլատում ենք մեր ուժերը, թշնամուն հնարավորություն տալով դարձյալ մի մեծ պատառ պոկելու մեր հայրենիքից: Այսպես շարունակելու դեպքում, իմ խորին համոզմամբ, մենք դարը կփակենք մի նոր ցեղասպանությամբ, և այս անգամ էլ կհայթափվի Արևելյան Հայաստանը: Այսպես ասում եմ, և սա բնավ չի նշանակում, թե համամիտ եմ Կտրին Սարդարյանի՝ «Հայքում» տպագրված հոդվածին, ուր նա առաջ է քաշում «Կամ Հայաստանի անկախությունը, կամ Արցախը» անբարո կարգախոսը, ինչպես նաև վերջերս «Երկիր» թերթում ներկայացված Աշոտ Բլեյանի դատողություններին, ուր նա ազդարա-

ռում է, թե՝ եթե պետության (՝՞) շահը պահանջում է՝ պիտի հանդուրժես թուրքի արարքները... Նման դատողություն երբեք չեմ հասկացել, դա դավանանության նման մի բան է: Մանավանդ մի այնպիսի պահի, երբ ազգը ելել է ազգային-ազատագրական կենաց-մահու պայքարի: Անցած չորս տարվա ընթացքում, առանց Նժդեհին կարդալու, ես հանգել էի նժդեհականության գաղափարին և ՀԱԲ-ի ծրագիրը գրելիս համոզված էի, որ եթե շվեյցարական սկզբունքով մենք ստեղծենք ազգ-բանակ, ապա կունենանք առնվազն 1,5 միլիոնանոց զորուժ, Նժդեհի խոսքերով ասած՝ կունենանք ապստամբ ժողովուրդ, իսկ ապստամբ-ժողովրդին Աստված ինքն էլ չի կարող հաղթել: 88 թվականի փետրվար-մարտ ամիսներին մենք ապացուցել էինք, որ այդ ժողովուրդն ենք, սակայն, ինչպես արդեն ասել եմ, բարոյալքեցին ազգը. թե մենք, անա, աշխարհում ամենաբարեկիրթն ենք, ծաղիկ չենք տրորում, ճյուղ չենք կոտրում, մեր հանցագործները ոչ մի հանցագործություն չեն կատարում, աշխա՛հ, զարմացիր, թե ի՞նչ փափկասուն ու սիբարիտ ազգ ենք...

...Դատի ընթացքում եղան նաև հանելի անակնկալներ: Քաղկոմի շենքը, այսպես կոչված, պատանդ վերցնելու դրվագի կապակցությամբ հավաքագրել էին մոտ քառասուն վկաների, նպատակ ունենալով ապացուցել, որ մենք իսկապես բռնի ուժով, զենքի միջոցով կոպտություններ ենք թույլ տվել քաղկոմի աշխատակիցների նկատմամբ, ինչը որ բոլորն պատժելի է: Սակայն այդ քառասուն վկաներից և ոչ մեկը նման ցուցմունք չտվեց, ընդհակառակը, ասացին, որ իրենց հետ շատ կիրթ ու քաղաքավարի ենք վարվել, իսկ անա հաբականեներից առաջ շենք մտած ինչ-որ զինված անձնավորություններ իսկապես անկարգություններ արեցին, իսկ ՀԱԲ-ի ջոկատի տղաները նրանց վոնդեցին շենքից:

Ի պատիվ Վլ. Աղայանի պիտի ասեմ, որ նրա ոչ գրավոր, ոչ էլ դատի ժամանակ տված ցուցմունքի մեջ որևէ հորինովի բան չկար: Նա ասաց, որ թե Հանրապետական կուսակցության ներկայացուցիչներ Աշոտ Նավասարդյանը, Լևոն Հակոբյանը, Կարապետ Կարապետյանը, թե ՀԱԲ-ի ներկայացուցիչը (որ ես էի), շատ բարեկիրթ են պահել իրենց և խոսել են այնպիսի հարցերի շուրջ, որոնք անձամբ իրեն շատ են հետա-

բրբրել, նա չհամաձայնվեց դատավորի այն պնդմանը, թե իբր մենք խանգարել ենք նրանց նորմալ աշխատանքը. «Այն նպատակը, որ նրանք հետապնդում էին, նույնպես կարևոր քաղաքական աշխատանք էր, որին մենք բոլորս հետամուտ էինք,— ասաց նա,— ուզում էինք վեց ամսով հետաձգել ընտրությունները, որպեսզի քաղաքական բոլոր կուսակցությունները հնարավորություն ունենային հավասար պայմաններում ծավալելու իրենց նախընտրական գործունեությունը»:

Եղան նաև մարդիկ, որոնք շատ դրական գնահատեցին ՀԱԲ-ի գործունեությունը: Ասենք՝ կոնկրետ իմ գործով մեղադրվող Մայիս Միրզոևին մեղադրանք էր ներկայացված № 25 ավտոսերվիսից հափշտակած ավտոմեքենաների համար: Այդ սերվիսի պահեստապետը (ազգանունը չեմ հիշում) դատարանում ասաց, որ եթե չլինեին ՀԱԲ-ի չոկատները, իրենց մոտ ոչ մի մեքենա չէր մնա:

Կնոջս խնդրանքով կրճատեցի պատասխան խոսքիս բոլոր սուր տեղերը. նրան համոզել էին, որ ես ազատվելու եմ հենց դատարանի դահլիճից, այնպես որ իրադրությունը սրելու հարկ չկա: Համենայն դեպս, իմ ելույթը կառուցեցի այն առանցքի վրա (բացի նրանից, որ ներկայացված մեղադրանքները հորինովի են և ես անմեղ եմ), որ մենք կանգնած ենք պատմական, նակատագրական իրադարձությունների առաջ և եթե ազգը չգիտակցի շարենցյան նշմարտությունը՝ որ իր փրկությունը իր միասնության մեջ է, ապա կարող է 20-րդ դարը մեզ համար վերջանալ մի նոր ցեղասպանությամբ: Ազգի թիվ 1 խնդիրը ինքնապաշտպանության կազմակերպումն է. այդ նպատակից է ծնվել ՀԱԲ-ը, և քաղաքական բոլոր ուժերը, ողջ ժողովուրդը ամեն ինչ պիտի անի այդ բանակը զորացնելու համար:

Պիտի անկեղծորեն խոստովանեմ, որ դատարանը, անկախ շլնելով և հանձնարարություն կատարելով՝ կարող էր դատել ինձ վերագրված հոդվածներով սահմանվող առավելագույն պատժաչափով, բայց գիտակցելով, որ իսկապես հանցակազմ չկա, դատեց նվազագույնով՝ չորս տարվա ազատազրկում: Բայց քանի որ ամնիստիան եղել էր, և տարիքս էլ 60-ից անց էր, այդ ժամկետի երկու երրորդը կրճատվեց,

մնաց մեկ տարի չորս ամիս, որ պիտի կրեի ընդհանուր ռեժիմի գաղութում:

Մեզ թույլ տվեցին հարազատների հետ հանդիպել: Երկու ժամ զրուցեցի կնոջս, աղջիկներիս, քրոջս հետ, իրար գոտեպընդեցինք, հուսադրեցինք...

Դատվելուց հետո ՊԱԿ-ի մեկուսարանից ինձ տարան Սովետաշենի բանտ, որտեղ մեկ ամիս թողնելուց հետո տեղափոխեցին Կոշի գաղութ: Այդտեղ շատ մարդկանց հետ անձնական ծանոթություն հաստատեցի, շատ հետաքրքիր զրույցներ ունեցա: Շատերը շահագրգիռ էին իմանալու ճշմարտությունը ՀԱԲ-ը լուծարելու, նրա ղեկավարներին ներբակալելու, մեր մասին հորինված բազմաթիվ հեքյուրանքների շարժառիթների վերաբերյալ: Ես էլ աշխատում էի իրողությունը ներկայացնել այնպես, ինչպես որ ինձ էր հայտնի:

Օգտվելով առիթից, որ ինձ առանձին սենյակ էր հատկացված, շարունակեցի զբաղվել գորգերի ուսումնասիրությամբ, խորացրի անգլերենի գիտելիքներս, կալանավորների համար դիմումներ էի գրում, ներման հայցեր:

1991 թվականի սեպտեմբերի 25-ին գաղութում նորից դատ եղավ, որտեղ, ի թիվս այլևայլ գործերի, քննեցին նաև իմը: Դատարանը հարմար գտավ իմ հանդեպ կիրառել քրեական օրենսգրքի 49-րդ հոդվածը, որով սահմանվում է վաղակետ պայմանական ազատում...

Ես երդում ունեի, որ ազատվելու օրը, նախքան տուն գնալը, պիտի այցելեմ Զաուշի գերեզմանին, այնուհետև խուստուփ գնամ՝ Նժդեհի գերեզմանի քարը համբուրելու: Գաղութի պետի հանձնարարությամբ աշխատակիցներից մեկը իր անձնական ավտոմեքենայով ինձ տարավ Զաուշի գյուղը: Ճանապարհին ծաղիկներ առա՝ գնացի գերեզմանոց: Համբուրեցի մեր անմոռանալի մարտական ընկերոջ շիրմաքարը: Չգիտեմ ինչպես՝ լուրն իսկույն տարածվեց գյուղում, և քիչ հետո այդտեղ եկան Զաուշի զինակիցները և որդին՝ 16—17 տարեկան մի շատ համակրելի տղա: Ինձ չճանաչեցին: Հետս եկած վարորդն ասաց՝ գիտե՞ք ով է: Ասացին՝ կերևի, որ կրովող տղա է: Եվ երբ ուղեկիցս ասաց՝ «պարոն Վարդանն է», ներքով մոտեցան, ողջագուրվեցին... Ասացի՝ իմացեք, որ Զաուշը ՀԱԲ-ի գնդակից չի զոհվել: Ասացին՝ գիտենք...

Այդտեղից, բնականաբար, խուստուփ գնալ չէի կարող, սպորտային հագուստով էի, ուղեկիցս բենզին չուներ, եղանակն էլ այն չէր: Այդտեղից ուղիղ գնացի աղչկաս տուն, թոռներիս տեսա, նոր միայն հաչորդ օրը զանգահարեցի կնոջս...

Այդպես ավարտվեց իմ ոդիսականը:

ՀԱԲ-ը լուծարվեց, և դրա հետևանքներն են նաև Շահումյանում և Արցախում 24 հայկական գյուղերի կոտորածը, թալանը և հայթափումը: Հանրապետության անխոցելի սահմանները բազմիցս ենթարկվեցին լայնամասշտաբ գրոհների, դատարկվեցին սահմանամերձ շատ գյուղեր, հրդեհվեցին, գրնդակոծվեցին բազմաթիվ տներ, առևանգվեցին անասնահոտեր, նյութական ու մարդկային մեծ կորուստներ պատճառվեցին մեզ: Հայտնի է, որ սահմանամերձ շատ գյուղերում մինչև օրս էլ գյուղատնտեսական աշխատանքներ չեն կատարվում: Որտեղ որ մնացել են ՀԱԲ-ի նախկին, այժմ արդեն երկրապահ կոչվող ջոկատները, այնտեղ թշնամին արժանի հակահարված է ստացել: ՀԱԲ-ի լուծարումն ունեցավ միմիայն բարոյալրող նշանակություն:

Կարող եմ անվարան ասել, որ Արցախում կռվող ազատամարտիկների մի ճնշող մասը ՀԱԲ-ի զինվորներն ու հրամանատարներն են, որ զուրգուրանքով պահում են իրենց զինգրքույկները: Ոչ մի կասկած չունեմ, որ եթե ժողովրդին նորից լայնամասշտաբ վտանգ սպառնա, ապա խաղաղ աշխատանքի անցած նախկին հաբականները դարձյալ կկանգնեն հայրենիքի պաշտպանության առաջավոր դիրքերում:

— Ինչո՞վ եք զբաղվում այժմ, ի՞նչ մտադրություններ ունեք:

— Ինձ համար շատ դժվար է կոնկրետ ու որոշակի պատասխան տալ այդ հարցին. ունեմ երեք նախասիրություն, երեք մտադրություն՝ Կոմիտասը, հայկական գորգարվեստը և ՀԱԲ-ի պատմությունը: Վաղուց նպատակ ունեմ վեպ գրել և Կոմիտասի կյանքն ու գործը ներկայացնել 20-րդ դարի հայ և համաշխարհային իրադարձությունների համայնապատկերի վրա: Այն պիտի ունենա «Անհեղ դատաստան» վերնագիրը, որն էլ լինելու է վեպի գաղափարական առանցքը. եթե մենք չկարողանանք համախմբվել իբրև միասնական ազգ, չկարո-

դանանք դիմագրավել փորձություններին ու չհաղթել, ապա մենք էլ դառնալու ենք անեղ դատաստանի զոհերը, իսկ եթե կարողացանք՝ անեղ դատաստանի առաջ կկանգնի մեր դարավոր ոսոխը:

Հայկական գրականության ուսումնասիրությունը ոչ թե սոսկ այդ բնագավառին նվիրված գիտական աշխատանք է, այլ մեր մշակույթի բուն արմատներից բխող և բացառապես հայկական մի երևույթի գնահատում: Գրականագործությունը հայ արվեստի մյուս ճյուղերի հետ մեկտեղ խոր հետք է թողել համաշխարհային մշակույթի վրա. նրա ուսումնասիրությունը պահանջում է վիթխարի ջանք ու նվիրվածություն:

Ինձ հանգիստ չեն տալիս նաև մեր մարտիկների բազում խիզախությունները, մեր զոհված ընկերների անմարելի հիշատակը...

Այս չորս տարիները ինձ հանգեցրին ցեղակրոնության՝ որպես միակ և հավերժական ազգափրկիչ գաղափարին: Ունեմ բազմակողմանի մտածված ու մշակված գաղափարական ու գործողության ծրագիր:

Դեռ մտորումների մեջ եմ և չեմ որոշել, թե այս նվիրական նպատակներից որին եմ նախապատվություն տալու իմ առաջացած տարիքի մնացորդ մասում:

Իհարկե, լրագրային հրապարակումը հնարավորություն չտվեց բացելու ծանր վարագույրի բոլոր ծալքերը. իմ հիշողության մեջ եմ թողնում բազում-բազմաթիվ դեպքեր, իրադարձություններ, հանգամանքներ, համոզմունքներ, կասկածներ, մարդկային բնավորության հասկանալի ու բարդ դրսևորումների բնութագրեր... Հուսով եմ, որ այդ ամենը իրենց լուսաբանումը կստանան այն գրքում, որը անպայման գրվելու է մեր ազգային-ազատագրական պայքարի կարևոր դրվագներից մեկը միտումնավոր աղավաղումներից փրկելու թելադրանքով:

Գրի առավ ՌԱՅԱ ԽԱՍԱՊԵՏՅԱՆԸ

«Գրական թերթ», № 11 (2448) — № 14 (2451) 1992 թ.

ՈՂՋԱԿԻԶՄԱՆ ԽԱՐՈՒՅԿ

(Բոլոր ազատամարտիկներին՝ անմահ, թե ողջ)

Հայրենիքի արնածոր վերքը փակում են և կարող են միայն երդվյալ նահատակները, մարտիրոսները, ֆիդայիները, ցեղակրոնները, աստվածացած հայերը, արիները, դյուցազունները: Բոլոր նրանք, ում համար տեղ է պահված երկնքում՝ ՀԱՅԿՅԱՆ ԱՍՏՂԱՏԱՆԸ: Նրանք՝ ովքեր կարող են առյուծ ճղել և ոչ թե՝ կատու: Նրանք, ում առջև փոշիանում է թշնամու սարսափը: Նրանք, ովքեր ԹՇՆԱՄՈՒ ՍԱՐՍԱՓՆ ԵՆ: Մարտադաշտը, ահա անդաստանը ցեղակրոն ցանքսի ու հունձքի, ահա ասպարեզը նրա հավերժական ողջակիզման ու փառքի: Ցեղակրոնը որոնում է մարտ ու մահ որպես կեցության ու գոյի ճարակ և անմահանում ողջակիզվող արյան ոթումով, ազգային բագնի ու նրա կերոնների մշտավառ յուղը լինելով, հանոյելու ազգային ատվածների ռունգերը: Միայն ազգի այս ողջակիզվող փաղանգն է ի վինակի փրկելու ստույգ կորստյան դատապարտված իր ժողովուրդը:

Արիորդի, հայորդի, ողջակիզվող ցեղակրոն, մի՛շտ հիշի՛ր, եթե դու ամեն օր, ամեն ժամ չանմահանաս, ապա չի ապրելու ազգդ, միշտ մեռնելու է ժողովուրդդ:

Ողջակիզում: Ահա քո խաչը: Ու որքան մեծ է այդ ողջակիզման խարույկը, այնքան մեծ է հեռուները լուսաբձակող նրա լույսն ու ջերմությունը, այնքան փոքր է մութը հայրենի անդաստաններում, այնքան սրբազան է նրա յուրաքանչյուր թիզ հողը, այնքան տաճարացած յուրաքանչյուր տուն ու շեն:

Պանծա ու պանծացրու, աստվածընտիր ցեղակրոն:

Մի՛շտ հիշիր, դարձյալ հիշիր ու կրկին հիշիր, ով ցեղակրոն, քո ողջակիզման խարույկների շարանն է լուսավորում հայոց պատմության հինգհազարամյա քառուղին, որի օձաձայար երկնամետ կեռմանների վրա կերոնի պես վառվեցին

ՀԱՅԿՆ ու ԱՐԱՄԸ, ԵՐՎԱՆԴՆ ու ԱՐՏԱՇԵՍԸ, ՏԻԳՐԱՆՆ ու ԱՐՇԱԿԸ, ՎԱՐԴԱՆՆ ու ՎԱՀԱՆԸ, ՍՄԲԱՏՆ ու ԱՇՈՏԸ, ՌՈՒԲԵՆՆ ու ԼԵՎՈՆԸ, ԴԱՎԻԹ ԲԵԿՆ ու ՄԽԻԹԱՐԸ, ԱՆԴՐԱՆԻԿՆ ՈՒ ՆԺԴԵՀԸ: ԵՎ ԴՈՒ, ով մեռոր յա ցեղակիր ցեղակրոն: Ահա մեր ստույգ աստվածները, ահա մեր պաշտամունքը, ահա մեր ԱՆՄԱՀՈՒԹՅՈՒՆԸ. *մեր հինգհազարամյա խարույկների անվախճան ողջերթը:*

Խարույկվիր, ով ողջակեզ ցեղակրոն: Ապրեցրու ԱԶԳԴ, որ ապրեն քո աստվածները, պաշտեցրու քո աստվածները նոր զոհաբերումներով, որ չմեռնի քո ժողովուրդը:

Օ՜ն ահդր, ցեղակրոն:

Չի ասված է՝ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ, ՈՐԸ ՉԻ ՈՒԶՈՒՄ ՄԵՌՆԵԼ՝ ՉԻ ՄԵՌՆԻ. ու թե՝ ԱՊՍՏԱՄԲ ԺՈՂՈՎՐԴԻՆ ՄԻԱՅՆ ԱՍՏՎԱԾ ԿԱՐՈՂ է ՀԱՂԹԵԼ: ՄԻՆՉ ԱՍՏՎԱԾ է ՀԵՆՑ ԻՆՔԸ՝ ԱՊՍՏԱՄԲ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ:

ԱՍՏՎԱԾԱՅԻ՛Ր, Ո՞Վ, ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴ:

ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

27.09.1992 թ.

Ինձ համար մի ավելորդ անգամ պարզ դարձավ, որ այդ ամենը քաղաքական հաշվեհարդար է մի մարդու հանդեպ, որը չի ընդունում ՀՀՇ-ի գաղափարախոսությունը, նրա պայքարի ձևերն ու տակտիկան: Եվ ահա ինձ ու ՀԱԲ-ի մյուս ղեկավարների հետ հաշվեհարդար է տեսնվում, որ մեկուսացվի նաև բանակը, որն արդեն հոչակ էր վայելում Հայաստանում ու նրա սահմաններից դուրս: Միաժամանակ ազգին տրամադրում էր ՀԱԲ-ի գաղափարախոսության, այսինքն՝ ինքնապաշտպանության նպատակով ուժեղ կառույցներ ստեղծելու դեմ:

Հիշեցնեմ Սիմոն Վրացյանին գրած Ավետիք Իսահակյանի նամակը, որտեղ բանաստեղծը ռուս-թուրք-հրեա եռանկյունին դիտում էր որպես հայ ժողովրդի բնաջնջմանը հետամուտ մի պլյանս... որը, իմ կարծիքով, գործում է և՛ այսո՛ր:

Եթե մենք չկարողանանք համախմբվել իբրև միասնական ազգ, չկարողանանք դիմագրավել փորձություններին ու չհաղթել, ապա մենք էլ դառնալու ենք ահեղ դատաստանի զոհերը, իսկ եթե կարողացանք՝ ահեղ դատաստանի առաջ կկանգնի մեր դարավոր ոսոխը:

Այսպես շարունակելու դեպքում, իմ խորին համոզմամբ, մենք դարը կփակենք մի նոր ցեղասպանությամբ, և այս անգամ էլ կհայաթափվի Արևելյան Հայաստանը:

Պատվեր 835։ Տպաքանակ 10000։ Գինը պայմանագրային.
ՀՀ Կառավարությանն առընթեր մամուլի վարչության թիվ 1 տպարան, Հանրապետության 65։

✧

Ազգի թիվ 1 խնդիրը ինքնապաշտպանության կազմակերպումն է. այդ նպատակից է ծնվել ՀԱԲ-ը, և քաղաքական բոլոր ուժերը, ողջ ժողովուրդը ամեն ինչ պիտի անեն այդ բանակը զորացնելու համար:

✧

ՀԱԲ-ը լուծարվեց, և դրա հետևանքներն են նաև Շահումյանում և Արցախում 24 հայկական գյուղերի կոտորածը, թալանը և հայաթափումը: Հանրապետության անխոցելի սահմանները բազմիցս ենթարկվեցին լայնամասշտաբ գրոհների, դատարկվեցին սահմանամերձ շատ գյուղեր, հրդեհվեցին, գնդակոծվեցին բազմաթիվ տներ, առևանգվեցին անասնահոտեր, նյութական ու մարդկային մեծ կորուստներ պատճառվեցին մեզ:

✧

ՀԱԲ-ի լուծարումն ունեցավ միմիայն բարոյալքող նշանակություն:

✧

Նոր ստեղծված իշխանությունը, եթե այն իսկապես շարժման ծնունդն էր, իր զավակին չպետք է լափեր, այլ պիտի սրտացավությամբ զբաղվեր նրա արմատական վերակառուցման խնդիրներով:

ՀԱՍՈՒՅԹԸ՝
ԶՈՀՎԱԾ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ
ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ